

«Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միություն

Հասմիկ Այվազյան

**ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԻԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՕՐՎԱ ՊԼԱՆՆԵՐԻ
ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Երևան
2014



«Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով լավ գիտի, թե ինչ պետք է իմանան իր աշակերտները և ինչ ճանապարհով է պետք հասնել այդ գիտելիքներին»

Վ. Ա Սուխոմլինսկի

Գլուխ 1. Դասն ամբողջական համակարգ է

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների հաստատուն կազմի և սովորողների գործունեության կազմակերպման ձև:

Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով (դասացուցակ) և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Այդ ձևում ներդրված են կրթական-դաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն և դրանից բխող դիդակտիկ տարրեր:

Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և վերջապես նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ:

Դասի տիպերը

Դասը դասկարգում են ըստ դիդակտիկ նպատակների, գիտելիքների կազմակերպման նպատակների, դասի անցկացման միջոցների և բովանդակության, ուսումնական գործընթացի հիմնական փուլերի, դասի ընթացքում լուծվող դիդակտիկ խնդիրների, դասավանդման մեթոդների և սովորողների կրթական գործընթացի կազմակերպման միջոցների: Այս տեսանկյունից առանձնացվում են դասի հետևյալ տիպերը՝

1. Նոր ուսումնական նյութի յուրացման դաս
2. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դաս (յուրացված նյութի նպատակային կիրառություն)
3. Ընդհանրացման և համակարգման դաս
4. Համակցված դաս
5. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների շտկման և վերահսկման դաս

Դասի ոչ ավանդական ձևերն են՝

1. Դերային խաղեր
2. Դաս-ներկայացում
3. Հեքիաթային դիպաշարի կատարում
4. Ստուգատես
5. Մտապատկերների դաս
6. Դաս-խաղ
7. Գործարար խաղ



8. Դաս-ստուգարք
9. Դաս-փոխուսուցանում
10. Դաս-ձանապարհորդություն
11. Կլոր սեղան կամ կոնֆերանս
12. Դաս-մրցույթ
13. Դաս-մամլո ասուլիս
14. Բաց մտքերի դասավանդման
15. Դաս-երկխոսություն
16. Դաս-վիկտորինա
17. Խաղ «Հետաքննությունը վարում են գիտակաները»
18. Արդիական հարցազրույցներ
19. Գիտելիքների աճուրդ
20. Իմիտացիոն-դերային մոդելավորում
21. Դաս-բանավեճ
22. Ուսանողների մտածելակերպի մոդելավորում
23. Դաս-մրցաշար
24. Դերային խաղ-բիզնես
25. Դաս-Էվրիկա
26. Դաս-դասախոսություն
27. Խաղ "Կախարդական ծրար»
28. Միջառարկայական ինտեգրված դաս
29. Ստեղծագործական դաս և այլն:

Դասի կառուցվածքը

Ուսումնառության ընթացքում առաջացած և ուսումնական գործընթացի նպատակային առաջընթացն ապահովող տարրերի տարաբնույթ փոխազդեցությունների հանրագումարը կոչվում է **դասի կառուցվածք**: Ըստ կառուցվածքի դասերը լինում են՝

1. [Նոր նյութի յուրացման դաս](#)
2. [Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդման և զարգացման դաս](#)
3. [Կարողությունների և հմտությունների ձևավորման դաս](#)
4. [Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման դաս](#)
5. [Կրկնողության դաս](#)
6. [Կրկնողական-ընդհանրացնող դաս](#)
7. [ստուգողական կամ սխալների ուղղման դաս](#)
8. [Համակցված դաս](#)

Նոր նյութի յուրացման դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝

Քայլ 1 - ուսուցանվող նյութի նախնական ներմուծում՝ հաշվի առնելով մասնակիցների բարձր մտային ակտիվության ժամանակ ձանաչողության գործընթացի օրինաչափությունները:



Քայլ 2 – մատնանշել ուսուցանվող նյութի առավել կարևոր հատվածները:

Քայլ 3 - ձևավորել հիշելու և հիշողությունում երկարատև պահպանելու մոտիվացիա:

Քայլ 4 – զարգացնել մտապահման տեխնիկան (աշխատել հիշողությանն աջակցող նյութերով, կատարել իմաստային խմբավորում)

Քայլ 5 - ուսուցչի ուղղորդմամբ մասնակի եզրահանգումների և ուղղակի կրկնողությունների միջոցով կատարել նյութի նախնական ամրապնդում

Քայլ 6 – վերահսկել նախնական մտապահման արդյունքները

Քայլ 7 – կատարել պարբերական համակարգված կրկնողություններ՝ սկզբում կարճ ժամանակահատվածներում, ապա ավելի երկար ժամանակահատվածում, համադրելով վերարտադրության նկատմամբ տարաբնույթ պահանջների հետ, այդ թվում նաև դիֆերենցված առաջադրանքների նկատմամբ:

Քայլ 5 - աշակերտներին մղել ներքին կրկնողության և նոր գիտելիքների ձեռք բերման համար նախկինում ստացած գիտելիքների և հմտությունների մշտապես կիրառման:

Քայլ 8 - հենքային նյութը հաճախակի ներառել գիտելիքների վերահսկողության մեջ, նյութի հիշման և կիրառման արդյունքները կանոնավոր գնահատել:



Գլուխ 2. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դասի հնարավոր կառուցվածքները

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդման և զարգացման դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝

Քայլ 1 - բացահայտել նախատեսված աշխատանքի նպատակը:

Քայլ 2 – վերարտադրել առաջադրված խնդիրների կատարման համար անհրաժեշտ գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

Քայլ 3 – կատարել տարբեր խնդիրների վարժություններ և առաջադրանքներ:

Քայլ 4 – ստուգել կատարված աշխատանքները:

Քայլ 5 – քննարկել և ուղղել սխալները

Քայլ 6 – անհրաժեշտության դեպքում հանձնարարել տնային առաջադրանք:

Կարողությունների և հմտությունների ձևավորման դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝

Քայլ 1 - շեշտադրել դասի նպատակները:

Քայլ 2 – կրկնել ձևավորված հիմնարար կարողությունները և հմտությունները:

Քայլ 3 – կատարել ստուգողական վարժություններ:

Քայլ 4 – ծանոթացնել նոր կարողությունների հետ, ցուցադրել կարողությունների ձևավորման օրինակ:

Քայլ 5 – կատարել նոր կարողությունների յուրացմանը միտված վարժություններ:

Քայլ 6 – կատարել նոր կարողությունների ամրապնդմանը միտված վարժություններ:

Քայլ 7 - ըստ օրինակի կատարել ալգորիթմի կատարմանը միտված մարզող վարժանքներ:

Քայլ 8 – կատարել նմանատիպ իրավիճակների հաղթահարման վարժություններ:

Քայլ 9 – կատարել ստեղծարար բնույթի վարժանքներ:

Քայլ 10 -ամփոփել դասը:

Քայլ 11 – հանձնարարել տնային առաջադրանք:

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝

Քայլ 1 - կազմակերպել դասի սկզբը՝ աշակերտների հոգեբանական դիրքորոշումը:

Քայլ 2 - հաղորդել դասի թեման և խնդիրները:

Քայլ 3 – աշակերտներին մղել կարողությունների ձևավորման համար անհրաժեշտ նոր գիտելիքների ուսումնասիրման:

Քայլ 4 – ձևավորել նախնական կարողություններ, ամրապնդել և համանման ձևաչափով իրավիճակներում դրանք կիրառել:

Քայլ 5 – կատարել գիտելիքների և կարողությունների կիրառման վարժություններ՝ փոփոխված պայմաններում:

Քայլ 6 - ստեղծարար կիրառել ստացված գիտելիքներն ու կարողությունները:

Քայլ 7 – կատարել հմտությունների փորձարկման վարժանքներ:

Քայլ 8 – հանձնարարել տնային առաջադրանք:

Քայլ 9 – ամփոփել դասը՝ աշակերտների կատարած աշխատանքի գնահատմամբ:



Գլուխ 3. Գիտելիքների ընդհանրացման և համակարգման դասի կառուցվածքները՝

Կրկնողության դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝

Քայլ 1 – կազմակերպել դասի սկզբը:

Քայլ 2 – առաջադրել դասի կրթական, դաստիարակչական և զարգացողական խնդիրները:

Քայլ 3 – ստուգել տային առաջադրանքը՝ միտված հիմնական հասկացությունների, մտահանգումների հիմնարար գիտելիքների, կարողությունների կիրառման միջոցների (գործնական և մտային) կրկնողությանը: Նախորդ դասին, հաշվի առնելով ակնկալվող կրկնողությունը, հարկավոր է ընտրել համապատասխան տնային առաջադրանքներ:

Քայլ 4 – ամփոփել կրկնողության արդյունքները, ստուգել դասի ժամանակ ուսուցողական աշխատանքների արդյունքները:

Քայլ 5 – հանձնարարել տնային առաջադրանք:

Կրկնողական-ընդհանրացնող դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝

Քայլ 1 – իրականացնել դասի կազմակերպչական մասը:

Քայլ 2 – ներկայացնել ուսուցչի նախաբանը, որով նա կարևորում է ուսումնասիրվող նյութը, հաղորդում է դասի նպատակը և պլանը:

Քայլ 3 – կատարել անհատական և խմբային տարաբնույթ ընդհանրացնող և համակարգող բնույթի բանավոր և գրավոր առաջադրանքներ, որոնք ձևավորում են ընդհանրացնող կարողություններ, փաստերի և երևույթների հիման վրա ընդհանրացված հասկանալի գիտելիքներ:

Քայլ 4 – ստուգել կատարված աշխատանքները, անհրաժեշտության դեպքում՝ ուղղել:

Քայլ 5 – ձևակերպել ուսումնասիրված նյութերի եզրահանգումները:

Քայլ 6 – գնահատել դասի արդյունքները:

Քայլ 7 – ամփոփել դասը:

Քայլ 8 – հանձնարարել (ոչ միշտ) տնային առաջադրանք:

Ստուգողական կամ սխալների ուղղման դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝

Քայլ 1 – կազմակերպել դասի սկզբը՝ անհրաժեշտ է ստեղծել համաչափ գործնական միջավայր:

Աշակերտները չպետք է վախենան կամ պահանջվածից շատ անհանգստանան ստուգողական աշխատանքից, քանի որ ուսուցիչն ստուգում է նյութի հետագա ուսումնասիրման համար երեխաների անհրաժեշտ պատրաստվածությունը:

Քայլ 2 – առաջադրել դասի խնդիրները: Ուսուցիչը հաղորդում է նյութը, որը ստուգելու կամ վերահսկելու է: Խնդրում է, որ աշակերտները հիշեն համապատասխան կանոնները և աշխատանքի ընթացքում կիրառեն դրանք: Հիշեցնում է, որ աշակերտներն անպայման ստուգեն





իրենց աշխատանքները:

Քայլ 3 – մեկնաբանել ստուգողական կամ վերահսկողական աշխատանքի (խնդիրներ, օրինակներ, թելադրություն, շարադրություն կամ հարցերի պատասխաններ և այլն) բովանդակությունը: Առաջադրանքները ծավալով կամ բարդության աստիճանով պետք է համապատասխանեն դպրոցական ծրագրին և հասկանալի լինեն յուրաքանչյուր աշակերտին:

Քայլ 4 – ամփոփել դասի արդյունքները: Ուսուցիչն ընտրում է աշակերտների լավագույն աշխատանքները վերլուծում է մյուս աշխատանքներում թույլ տրված սխալները և կազմակերպում է սխալների ուղղման աշխատանքը (երբեմն դրա վրա ծախսվում ողջ հաջորդ դասը):

Քայլ 5 – վեր հանել համաընդհանուր սխալները և խնդիրները, ինչպես նաև բացահայտել դրանց վերացման ճանապարհները և կատարելագործել գիտելիքներն ու կարողությունները:

Համակցված դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝ (այս դասը ունենում է մեկ կամ մի քանի դիդակտիկ նպատակներ)

Քայլ 1 – կազմակերպել դասի սկզբը:

Քայլ 2 – ստուգել տնային առաջադրանքը, առաջադրել դասի նպատակը:

Քայլ 3 – նախապատրաստել աշակերտներին նոր նյութի ընկալմանը, այսինքն արդիականացնել գիտելիքներն ու գործնական և մտավոր կարողությունները:

Քայլ 4 – աշակերտներին հանձնարարել ուսումնասիրել նոր նյութը, անհրաժեշտության դեպքում տալ համապատասխան բացատրություններ:

Քայլ 5 – ամրապնդել տվյալ դասի ընթացքում ուսումնասիրած և նորի հետ փոխկապակցված նախորդ նյութերը:

Քայլ 6 – ընդհանրացնել և համակարգել գիտելիքները և կարողությունները, փոխկապակցել նոր և նախկինում ստացված ու ձևավորված գիտելիքները:

Քայլ 7 – ամփոփել դասի արդյունքները:

Քայլ 8 – հանձնարարել տնային առաջադրանք:

Քայլ 9 – նախապատրաստել (ոչ միշտ) նոր նյութի ուսումնասիրմանը (նախնական աշխատանք):



Գլուխ 4. Դասի կառուցվածքային փուլերը

1. Կազմակերպչական

- **Փուլի դիդակտիկ խնդիրը:** Աշակերտներին նախապատրաստել աշխատանքի, առաջադրել դասի նպատակներն ու խնդիրները
- **Փուլի բովանդակությունը:** Աշակերտների և ուսուցչի փոխադարձ ողջույն, բացականչի ամրագրում, դասասենյակի վիճակի ստուգում, դասին աշակերտների պատրաստվածության ստուգում, ներքին պատրաստության և ուշադրության կազմակերպում
- **Դրական արդյունքների հասնելու պայմաններ:** ուսուցչի պահանջկոտություն, համբերատարություն, կարգապահություն, պահանջների առաջադրման հետևողականություն, կազմակերպչական ազդեցության համակարգվածություն
- **Դասի դիդակտիկ խնդիրների կատարման ցուցանիշներ:** Կազմակերպչական մասի կարճ ժամանակահատվածը, դասարանի լրիվ պատրաստվածությունը աշխատանքին, աշակերտների արագ ներգրավվումը աշխատանքային ռիթմի մեջ, բոլոր աշակերտների ուշադրության կազմակերպում:
- **Դասի դիդակտիկ խնդիրների իրականացմանը վերաբերվող պահանջներ:** գործընթացի կարճաժամկետ կազմակերպում, պահանջկոտություն, ուսուցչի զսպվածություն, գործունեության վառ արտահայտված կամային ուղղվածություն, աշակերտների գործունեության խթանում և նպատակաուղղվածություն
- **Դասի ժամանակ ակտիվացման եղանակները:** Գրատախտակին դասի նպատակների գրառում: Աշակերտների դասարանական աշխատանքներին պատրաստ լինելու գնահատում:
- **Իրականացման ժամանակ թույլատրվող հնարավոր սխալները:** Աշակերտներին ներկայացվող պահանջների միասնականության բացակայություն, չի խթանվում նրանց ճանաչողական ակտիվությունը

2. Տնային առաջադրանքի բազմակողմանի ստուգում

- **Փուլի դիդակտիկ խնդիրը:** Սահմանել տնային աշխատանքի կատարման ճշտությունը և ընթերցումը բոլոր աշակերտների կողմից, զարգացնելով ԳԿՀ-ն, ստուգման միջոցով բացահայտել բացթողումները:
- **Փուլի բովանդակությունը:** Պարզաբանել տնային առաջադրանքի յուրացման աստիճանը, որոշել գիտելիքների համընդահանուր թերությունները և դրանց պատճառները, հնարավորինս վերացնել բացահայտված թերությունները
- **Դրական արդյունքների հասնելու պայմաններ:** Ուսուցչի արդյունա-վետությունը, նրա գործունեության նպատակաուղղվածությունը, դասարանի հնարավորինս բոլոր աշակերտների տնային աշխատանքներն ստուգելու համակարգված հնարքների կիրառում
- **Դասի դիդակտիկ խնդիրների կատարման ցուցանիշներ:** Ուսուցչի հնարավորությունները կարճ ժամանակահատվածում (5-7 րոպե) բացահայտել աշակերտների մեծամասնության գիտելիքների աստիճանը և ընդհանուր բացթողումները, տնային առաջադրանքի ստուգման ընթացքում հիմնային հասկացությունների արդիականացման և կարգավորման հնարավորությունը, վերացնել բացահայտված թերությունների պատճառները, որպես տնային առաջադրանք հանձնարարված նյութի իմացության որակի գնահատման բարձր մակարդակ
- **Պահանջները:** Դասի այլ փուլերի համեմատությամբ հարցումների հնարավոր քիչ քանակություն, հարցման կազմակերպման ձևեր և նպատակներ (անհատական, ֆրոնտալ), երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվարկ,



որոնողական և խնդրահարույց առաջադրենքների գերիշխող բնույթ

- **Դասի ժամանակ ակտիվացման եղանակները:** Վերահսկման տարբեր ձևերի և մեթոդների կիրառում, որոնողական, ստեղծարար և անհատական առաջադրանքներ՝ սովորողներին
- **Իրականացման ժամանակ թույլտրվող հնարավոր սխալները:** Դասերի միօրինակությունը և հարցման մեթոդները, սովորողների անհատական և ուսումնասիրվող նյութի առանձնահատկությունների հաշվի առնման բացակայություն

3. Գիտելիքների կարողությունների և հմտությունների բազմակողմանի ստուգում

- **Փուլի դիդակտիկ խնդիրը:** Խորը և բազմակողմանի ստուգելի աշակերտների գիտելիքները, գիտելիքների և կարողությունների հայտնաբերված բացթողումների պատճառների բացահայտում, խթանել հարցվածների և ամբողջ դասարանի ինքնակրթության և ուսումնառության խելամիտ մեթոդների տիրապետումը
- **Փուլի բովանդակությունը:** Նյութի յուրացման ծավալի և քանակի ստուգում տարբեր մեթոդներով, աշակերտների մտածելակերպի ստուգում, կարողությունների և հմտությունների ձևավորվածության աստիճանի ստուգում, աշակերտների պատասխանների մեկնաբանություն, գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատում
- **Դրական արդյունքների հասնելու պայմաններ:** Գիտելիքների ստուգման ամենատարբեր մեթոդների կիրառում, սկսած առձակատ գրույցներից, անհատական հարցումներից և ավարտած թեստային աշխատանքով, որը հնարավորություն է տալիս ստանալ ամբողջ դասարանի պատասխանները՝ 10-20 հարցերի համար 10-15 րոպեի ընթացքում: Գիտելիքների ըմբռնման խորության և ամրության ստուգման համար նախատեսված լրացուցիչ հարցերի ձևակերպում, հարցման ժամանակ անսովոր իրավիճակների ստեղծում, առաջադրված հարցերին ճիշտ և ամբողջական պատասխաններ փնտրելու գործընթացում, հատուկ առաջադրանքների միջոցով, բոլոր աշակերտների ակտիվ ներգրավում, տվյալ փուլում իրականացվող աշխատանքը կարևորելու միջավայրի ստեղծում,
- **Դասի դիդակտիկ խնդիրների կատարման ցուցանիշներ:** Գիտելիքների ոչ միայն ծավալի և ճշտության ստուգում, այլ նաև խորության, գիտակցականության, ճկունության և արդյունավետության, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողության, վերանայելով աշակերտների պատասխանները պարզել իրենց գիտելիքների, կարողությունների և հմտությունների դրական եւ բացասական կողմերը և նշել, թե ինչ պետք է անել ինքնուրույն աշխատանքի կատարման կատարելագործման համար, առանձի աշակերտների գիտելիքների ստուգման գործընթացում ամբողջ դասարանի ակտիվ ներգրավում
- **ԳԿՀ-ի նկատմամբ պահանջները:** Հարցումների ուսուցանող բնույթը: Աշակերտների գործունեության ամբողջականություն, գիտակցականություն: Աշակերտների ներգրավվածությունը սխալների ուղղման գործընթացում: Հիմնավորված պատասխանների օբյեկտիվությունը:
- **ԳԿՀ-ի ստուգման ժամանակ թույլտրվող հնարավոր սխալները:** Ստուգման գործընթացում աշակերտների թույլ ակտիվացում: Գնահատականների մեկնաբանությունների բացակայություն



4. Նոր նյութի ակտիվ և ընթրնունով յուրացնելուն միտված նախապատրաստություն

- **Փուլի դիդակտիկ խնդիրը:** Կազմակերպել և նպատակին հասցնել աշակերտների ճանաչողական գործունեությունը:
- **Փուլի բովանդակությունը:** Ուսուցանվող նոր նյութի թեմայի, խնդիրների և նպատակի հաղորդում, դրա գործնական կիրառության ցուցադրություն, կրթական խնդրի առաջադրում:
- **Դրական արդյունքների հասնելու պայմաններ:** Նպատակի նախնական ձևակերպում, սովորողների համար նոր նյութի կարևորության գնահատում, դասի կրթական նպատակի հստակ ձևակերպում՝ ի՞նչ պետք է սովորեն դասի ընթացքում, ինչպիսի՞ գիտելիքների, կարողությունների և հմտությունների պետք է տիրապետեն: Տարբեր դասերի ընթացքում դասի նպատակների հաղորդման մեթոդների փոփոխականություն:
- **Դասի դիդակտիկ խնդիրների կատարման ցուցանիշներ:** Հաջող փուլերում սովորողների ճանաչողական գործունեության ակտիվացում, նոր նյութի ընկալման և կշռադատման արդյունավետության բարձրացում, ուսուցանվող նյութի գործնական նշանակության ընկալումը

5. Նոր գիտելիքների յուրացում

- **Փուլի դիդակտիկ խնդիրը:** Սովորողներին տալ կոնկրետ պատկերացում ուսումնասիրվող փաստերի, հիմնական գաղափարների վերաբերյալ, ինչպես նաև կանոնները, օրենքները և հանդգնությունները: Հասնել նրան, որ աշակերտները պատկերացնեն, գիտակցեն, նախնական ընդհանրացնեն և համակարգեն նոր գիտելիքները, յուրացնեն մեթոդները, ճանապարհները և միջոցները, որոնք հանգեցնում են տվյալ ընդհանրացմանը: Յուրացված նյութի հիման վրա ձևավորել համապատասխան գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:
- **Փուլի բովանդակությունը:** Ուշադրության բևեռացում, նոր նյութի հաղորդում, ընկալողականության ապահովումը, գիտակցումը, նյութի համակարգումն ու ընդհանրացումը
- **Դրական արդյունքների հասնելու պայմաններ:** Կիրառել հնարներ, որոնք ուժեղացնում են ուսուցանվող նյութի կարևոր կողմերի ընկալումը: Ուսումնասիրվող օբյեկտների և երևույթների առանձնահատկությունների ամբողջական և ճշգրիտ սահմանումը, ուսումնասիրվող օբյեկտների, երևույթների առավել կարևոր կետերի վերլուծություն և աշակերտների ուշադրության բևեռում դրանց վրա: ձևակերպումների, պլանի հիմնային կետերի, համառոտագրման թեզիսների գրառում, մտածողության հնարների՝ վերլուծության, համամատության, ընդհանրացման, կոնկրետացման և վերացարկման, կիրառում: Սովորողներին դնել խնդրահարույց իրավիճակների մեջ, առաջադրել փորձարարական հարցեր, անհրաժեշտության դեպքում կառուցել նյութի նախնական մշակման աղյուսակներ: Թարմացնել նրանց անձնական փորձը և հիմնային գիտելիքները, կատարել բառարանային աշխատանք:
- **Դասի դիդակտիկ խնդիրների կատարման ցուցանիշներ:** Փորձարարական զրույց մեթոդի և ինքնուրույն աշխատանքն այդ զրույցին համադրելու ընթացքում, օգտագործելով համակարգչային տեխնիկան նոր գիտելիքների և հմտությունների յուրացման արդյունավետության ցուցանիշ են հանդիսանում զրույցի ժամանակ սովորողների պատասխանների ճշտությունը և գործողությունները և դասարանի ակտիվ մասնակցությունը ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփման, ինչպես նաև գիտելիքների գնահատման գործում:
- **Պահանջները:** Նոր թեմայի յուրացման խնդիրների հստակեցում, քննարկվող հարցի նկատմամբ հետաքրքրության խթանում: Նյութի պարբերաբար ներկայացման և հասանելիության, բավարար գիտականության ապահովում: Ուսումնասիրվող նյութի ռանցքային դատողությունների առանձնացում: Նոր նյութի յուրացման լավագույն մեթոդների համակարգի



և տեմպի կիրառում:

- **Դասի ժամանակ ակտիվացման եղանակները:** Ուսուցման ոչ-ստանդարտ ձևերի և մեթոդների կիրառում: Նոր նյութի յուրացման ընթացքում ինքնուրույնության բարձր մակարդակ: Ուսուցման տեխնիկական և տեսանելի միջոցների կիրառում:
- **Իրականացման ժամանակ թույլտրվող հնարավոր սխալները:** Խնդիրները հստակ ձևակերպված չեն, գլխավորն առնձնացված չէ, նյութը համակարգված և ամրագրված չէ, նախկինում ուսաննասիրված նյութի հետ փոխկապակցված չէ: Բացատրության մակարդակը սովորողների համար բարձր է:

6. Նոր նյութի ըմբռնման ստուգում: Նոր գիտելիքների յուրացում

- **Փուլի դիդակտիկ խնդիրը:**Պարզել, հասկացել են արդյո՞ք աշակերտները փաստերի միջև եղած կապերը, նոր հասկացությունների իմաստը, օրինաչափությունները: Շտկել բացահայտված բացթողումները:
- **Փուլի բովանդակությունը:** Ուսուցչի կողմից աշակերտների ուսումնական նյութի ըմբռնման խորության, ներքին օրինաչափությունների և էապես նոր հասկացությունների ստուգում:
- **Դրական արդյունքների հասնելու պայմաններ:**Մասնակիցների մտավոր ակտիվություն պահանջող հարցերի առաջադրում, գիտելիքների կիրառման ժամանակ ոչ-ստանդարտ իրավիճակների ստեղծում, մյուս աշակերտների կողմից լրացումների, ճշգրտումների առավել խելամիտ լուծման առաջադրում, լրացուցիչ պատասխանների թվի և բնույթի հաշվառում նոր նյութի ըմբռնման խնդիրների բացահայտման ժամանակ:
- **Դասի դիդակտիկ խնդիրների կատարման ցուցանիշներ:** Ուսուցիչը հարցնում է միջակ և թույլ աշակերտներին, դասարանը մասնակցում է նրանց գնահատմանը և ուսուցիչը ստուգման ընթացքում վերացնում է նոր նյութի ըմբռնման խնդիրները: Դիդակտիկ խնդիրների կատարման հիմնական չափանիշը նոր նյութի յուրացումն է հնարավորինս շատ միջակ և թույլ աշակերտների կողմից:

7. Նոր նյութի ամրապնդում

- **Փուլի դիդակտիկ խնդիրը:**Ապահովել սովորողներին գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են տվյալ նյութի հետ ինքնուրույն աշխատանքի համար:
- **Փուլի բովանդակությունը:** Ստացված գիտելիքների և հմտությունների ամրագրում, նոր նյութի ուսումնասիրման մեթոդի ամրագրում, գիտելիքների հերթական ստուգման ժամանակ սովորողի պատասխանի մեթոդի ամրագրում:
- **Դրական արդյունքների հասնելու պայմաններ:** Նախկին ստացած գիտելիքների կիրառելու հմտության ձևավորում, գործնական և տեսական խնդիրների լուծում, գիտելիքների ամրապնդման տարբեր ձևերի կիրառում:
- **Դասի դիդակտիկ խնդիրների կատարման ցուցանիշներ:** Փաստերը, հասկացությունները, կանոնները և մտքերը մեկը մյուսի հետ փոխկապակցելու կարողություն, նոր նյութի հիմնական գաղափարները վերարտադրելու կարողություն, առաջնային հասկացություններն ընդգծելու և դրանք կոնկրետացնելու կարողություն: Սովորողների ակտիվություն:
- **Իրականացման նկատմամբ պահանջները:** Կատարվող աշխատանքների մատչելիություն, հաջորդականություն և աշակերտների ինքնուրույնություն: Սովորողներին տարբերակված աջակցություն, սխալների վերլուծություն, առաջադրանքների կատարման ժամանակ վերահսկման և ինքնավերահսկման ապահովում:



- **Դասի ժամանակ ակտիվացման եղանակները:** Առաջդրանքների բազմազանությունը, դրանց գործնական ուղղվածությունը:
- **Իրականացման ժամանակ թույլտրվող հնարավոր սխալները:** Հարցերը և խնդիրներն առաջադրվում են նույն տրամաբանությամբ, ինչպես նոր նյութի ուսումնասիրման ժամանակ: Ամրագրման մեթոդների միօրինակությունը: Ամրագրմանը հատկացվող քիչ ժամաքանակը: Հղումը կատարվում է երկրորդականի վրա:

8. Տնային առաջադրանքի հանձնարարում, իրականացման մեկնաբանում

- **Փուլի դիդակտիկ խնդիրը:** Սովորողներին ներկայացնել տնային առաջադրանքը, բացատրել կատարման մեթոդները:
- **Փուլի բովանդակությունը:** Տեղեկատվություն տնային առաջադրանքի վերաբերյալ, կատարման ընթացքի մեկնաբանում:
- **Դրական արդյունքների հասնելու պայմաններ:** Աշխատանքի կատարման մեկնաբանության հավասարակշռված և համբերատար ներկյացում, կատարման հաջորդականության բացատրում: Փուլի պարտադիր և համակարգված կատարում դասի սահմաններում, կատարման հերթականությունը հակիրճ ներկայացնելու կարողություն:
- **Դասի դիդակտիկ խնդիրների կատարման ցուցանիշներ:** Բոլոր աշակերտների կողմից տնային առաջադրանքի ճիշտ կատարումը:
- **Դասի դիդակտիկ խնդիրների իրականացմանը ներկայացվող պահանջները:** Տնային առաջադրանքի լավագույն ծավալ և բարդություն: Հնարավոր դժվարությունների և դրանց վերացման վերաբերյալ: Տնային աշխատանքի նկատմամբ հետաքրքրության բարձրացում:
- **Դասի ժամանակ ակտիվացման եղանակները:** Առաջադրանքների տարբերակում, դրանց կատարման ստեղծագործ մոտեցում՝ հարցազրույց, նախագծերի պաշտպանություն:
- **Իրականացման ժամանակ թույլտրվող հնարավոր սխալները:** Տնային առաջադրանքի վերաբերյալ տեղեկատվությունը զանգը հնչելուց հետո: Մեծ ծավալը և բարդությունը: Մեկնաբանության բացակայությունը, կատարման մեթոդների և նպատակների պարզաբանման բացակայությունը:

9. Դասի ամփոփում

- **Փուլի դիդակտիկ խնդիրը:** Վերլուծել, գնահատել հաջողվածությունը և և նպատակների կատարումը, պլանավորել առաջընթացը:
- **Փուլի բովանդակությունը:** Ինքնագնահատում և դասարանաի ու առանձին աշակերտների աշխատանքների գնահատում: Գնահատականների հիմնավորում, դիտողություններ դասի վերաբերյալ, հնարավոր փոփոխությունների վերաբերյալ առաջարկներ:
- **Դրական արդյունքների հասնելու պայմաններ:** Ճշտությունը, լակոնիկությունը, իրենց աշխատանքների գնահատման գործընթացին սովորողների առավելագույն մասնակցությունը:
- **Պահանջները:** Աշակերտների ինքնագնահատման և ուսուցչի գնահատականի համարժեքություն: Աշակերտների կողմից ստացված արդյունքների կարևորության գիտակցում և կրթական նպատակներին հասնելու համար դրանք կիրառելու պատրաստակամություն
- **Լրացուցիչ ակտիվացում:** Առանձին աշակերտների, ուսուցչի և դասարանի աշխատանքի գնահատման միասնական համակարգի կիրառում:
- **Սխալները:** Արդյունքների ամփոփումը զանգը հնչելուց հետո, փուլի ոչ ճիշտ կատարումը կամ



ամբողջությամբ չկատարումը: Գնահատման ոչ թափանցիկությունը և կողմնակալությունը, խրախուսման բացակայությունը:

10. Դասի նկատմամբ պահանջները

Ժամանակակից դասի դիդակտիկ պահանջներ

- Դիդակտիկ նպատակի հստակ ձևակերպում
- Դասի նպատակներին և ուսումնական ծրագրին համապատասխան դասի լավօրինակ բովանդակության սահմանում՝ հաշվի առնելով աշակերտների պատրաստվածության և պատրասվելու մակարդակները
- Աշակերտների կողմից գիտելիքների յուրացման մակարդակի, կարողությունների և հմտությունների ձևավորման կանխատեսում ինչպես դասի, այնպես էլ դասի տարբեր փուլերի ընթացքում:
- Դասի յուրաքանչյուր փուլի վրա լավագույնս ազդող դասավանդման առավել ռացիոնալ մեթոդների, հնարների և միջոցների ընտրություն
- Դասապրոցեսում սովորողների առավելագույն ինքնուրույնության և դասի ժամանակ անհատական և խմբային աշխատանքների տարբեր ձևերի հետ համադրված ճանաչողական ակտիվության ապահովում:
- Դասի ժամանակ բոլոր դիդակտիկ սկզբունքների իրագործում
- Աշակերտների ուսումնառության լավագույն պայմանների ստեղծում:

Դասի հոգեբանական պահանջներ

- Աշակերտների զարգացումը պլանավորել կոնկրետ դասի և կոնկրետ ուսումնական առարկայի սահմաններում:
- Արդյունքների և թեմայի յուրացման հոգեբանական խնդիրների ներառում դասի նպատակի ենթատեքստում:
- Կիրառել աշակերտների զարգացումն ապահովող առանձնահատուկ հոգեբանամանկավարժական միջոցներ, մեթոդական հնարներ:

Դասին ներկայցվող հիգիենիկ պահանջներ

- Ջերմաստիճանը՝ +15- +18 0C, օդի հարաբերական խոնավությունը՝ 30 – 60%
- Օդի ֆիզիկա-քիմիական հատկությունները (օդափոխության անհրաժեշտությունը)
- Լուսավորվածությունը
- Գերհոգնածության և գերծանրաբեռնվածության կանխարգելումը
- Գործունեության տեսակների հերթագայությունը (լսողականի հերթագայումը հաշվարկների, գրաֆիկական և գործնական աշխատանքների հետ)
- Աշխույժացնող վարժությունների ժամանակին և որակով կատարումը
- Սովորողների ճիշտ աշխատանքային դիրքի պահպանումը
- Դպրոցական կահույքի համապատասխանությունը աշակերտի հասակին



Դասի վարման տեխնիկային վերաբերող պահանջներ

1. Դասը պետք է լինի զգացմունքային, հետաքրքրություն առաջացնի ուսման նկատմամբ դաստիարակի գիտելիքների պահանջարկ
2. Դասի ընթացքում ուսուցչի և աշակերտների գործողությունները պետք է ավարտուն լինեն
3. Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում պետք է լիարժեք շփում լինի, պետք է պահպանվեն մանկավարժական տակտը և մանկավարժական լավատեսությունը:
4. Դասի ընթացքում պետք է տիրի բարի կամքի դրսևորման և ակտիվ ստեղծարար աշխատանքի մթնոլորտ:
5. Հնարավորության սահմաններում հարկ է փոփոխել աշակերտների գործունեության տեսակները, լավագույնս համադրել դասավանդման տարբեր մեթոդները և հնարները:
6. Դպրոցում գործող ուղղագրական ռեժիմը պետք է միասնական լինի:
7. Ուսուցիչը պետք է ապահովի յուրաքանչյուր աշակերտի ակտիվ ուսումնառությունը:



Գլուխ 5. Դասի նպատակը

Նպատակն այն կետն է, որին ուսուցիչը պետք է հասնի իր գործունեության միջոցով, այսինքն՝ նպատակը պատասխանում է ի՞նչ են ես ուզում հարցին: Դասի նպատակը կարող է լինել կրթական, դաստիարակչական և զարգացնող: Առավել տարածված են նպատակին վերաբերող հետևյալ հասկացությունները՝

- 1) գործունեության արդյունքը կանխատեսող
- 2) ապագայի առարկայական նախագծում
- 3) ցանկալիի սուբյեկտիվ կերպար, որը աշակերտի գիտակցության մեջ առաջ է մղում իրադարձությունների արտացոլումը

Կրթության նպատակը ակընկալվող արդյունքն է, որը պետք է լինի իրական և կոնկրետ կրթական:

Դասին առընչվող նպատակադրումը հաճախ ուղեկցվում է հետևյալ խնդիրներով՝

- **Դասի ընթացքում նպատակի փոփոխություն:** Հաճախ ուսուցիչները մտավոր բավականություն են ստանում ոչ թե դասի արդյունքից, այլ նրանից, թե ինչով են զբաղվել երեխաները դասի ժամանակ: Իրականում տեղի է ունենում դասի նպատակի փոփոխություն՝ դրան հասնելու միջոցներով: Օրինակ՝ «Մեծագույն աշխարհագրական հայտնագործություններին» նվիրված աշխարհագրության դասին ուսուցիչը մեթոդամանկավարժական հնարների հրավառություն, բոլոր աշակերտներն ընդգրկված էին դասապրոցեսում, դասը հագեցած էր տեսանելիությամբ, սակայն անհասկանալի էր, թե ինչպիսի՞ եզրակացության հանգեցին երեխաները հայտնագործությունների նշանակության վերաբերյալ:
- **Ֆորմալ մոտեցում նպատակադրմանը:** Նպատակադրման անհստակությունը և անորոշությունը հանգեցնում են ուսուցչի և աշակերտների կողմից նպատակի չհասկանալուն:
- **Նպատակի ուռձացում:** ըստ մասշտաբի նպատակները լինում են **լոկալ** և **գլոբալ**: Սովորաբար դասի ժամանակ առաջադրվում են գլոբալ նպատակներ, այսինքն՝ նպատակ, որին չի կարելի հասնել մեկ դասի ընթացքում: Ռազմավարական, կրթական գլոբալ նպատակները ձևակերպված են ՀՀ կրթության մասին օրենքում և չափորոշիչներում: Գլոբալ նպատակները թելադրվում են հասարակության և պետության պահանջներից: Գլոբալ նպատակները մարդկային գործունեության ուղենիշներ են: Օրինակ՝ «սովորողների մտավոր զարգացումը», «գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են առօրյա կիրառության համար»: Եթե նպատակը առընչվում է կոնկրետ դասին, ապա այն **լոկալ նպատակ** է: Նպատակի տարբադարձումը ենթադրում է գտնել այնպիսի միջոցներ և հնարավորություններ, որոնց միջոցով կարելի է ստուգել նպատակն իրականացված է թե՞ ոչ:
- **Ուսուցչի անձնական նպատակի առաջադրում:** Նպատակը սովորողները չեն առաջադրում, դրա համար էլ դասը դառնում է անհետաքրքիր:

Նպատակադրումը գործողությանը մասնակից սուբյեկտների՝ ուսուցիչ, աշակերտ, նպատակների բացահայտումն է, մեկը մյուսի նկատմամբ նրանց դերաբաշխումը, փոխհամաձայնությունը և ձեռքբերումները: Այն պետք է անհատական լինի և համապատասխանի պլանավորված արդյունքին:

Նպատակները լինում են՝

- **Տարբադարձվող՝** նշանակում է առկա են հնարավորություններ և միջոցներ պարզելու համար նպատակը հաղթահարված է, թե՞ ոչ: Չափողականության չափանիշները որակական և քանակական են:
- **Կոնկրետ**



- Հասկանալի
- Գիտակցված
- Ցանկալի արդյունքը նկարագրող
- Խթանող (գործողության մղող).
- **Ճշգրիտ: Նպատակը չպետք է ունենա աղոտ եզրագծեր:** Չպետք է օգտագործել այնպիսի աղոտ արտահայտություններ, ինչպիսիք են «հայտնաբերել», «զգալ», «հասկանալ»:

Ուսուցողական նպատակներ

Ենթադրում են՝ սովորողների համակարգված գիտելիքների, գործնական հմտությունների և կարողությունների ձեռք բերում:

Ուսուցողական նպատակների ձևակերպման համար **անհրաժեշտ է կիրառել հետևյալ բայերը, որոնք ցույց են տալիս որոշակի արդյունքով գործողություն՝**

- «Ընտրել»,
- «Անվանել»,
- «Սահմանել»,
- «Ցուցադրել»,
- «գրել»,
- «Թվարկել»,
- «Կատարել»,
- «Համակարգել»...

Օրինակ: ինֆորմատիկայի դաս՝ «Համակարգչի բաղկացուցիչ մասերը» թեմայով: Ուսուցիչը ձևակերպել է նպատակները՝

- 1.Ներկայացնել հիմնական սարքավորումները:
- 2.Բացահայտել հիմնական սարքավորումների աշխատանքի կարևորությունը:
- 3.Կազմակերպել տվյալ սարքավորումների աշխատանքի ընթացքում ծագած հնարավոր խնդիրների վերաբերյալ քննարկումներ:

Այս նպատակներն ուսուցիչն իր համար է ձևակերպել, ոչ թե աշակերտների: Այս նպատակները նկարագրում են դասի ընթացքը: Բոլորովին հասկանալի չէ, թե ինչպես է ուսուցիչը արդյունքի հասնելու:

Մինչդեռ դասի նպատակները պետք է հնչեն այսպես՝

- 1.Առաջադրված ցուցակից կարողանան ընտրել համակարգչի հիմնական սարքավորումները:
- 2.Խմբավորեն միևնույն սկզբունքով աշխատող սարքավորումները:
- 3.Բացահայտեն յուրաքանչյուր սարքավորման աշխատանքի ընթացքում ծագած առնվազն 6 խնդիր: **Թվարկված նպատակները չափելի են, հստակ են և հասկանալի:**

Դաստիարակչական նպատակները

Նպաստում են՝ գիտելիքների, ուսուցման գործընթացի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը, մտահանգումներին, հայացքների և տեսակետների անձնային որակների, ինքնագնահատման և ինքնուրույնության ձևավորմանը, ցանկացած հասարակության մեջ պատշաճ վարքագծի փորձի ձեռքբերմանը:



Դասի դաստարակչական նպատակը պետք է հանգամանորեն պլանավորել: Դաստիարակչական նպատակները պետք է շատ կոնկրետ ձևակերպել, կիրառելով հետևյալ արտահայտությունները՝

- հետաքրքրություն առաջացնել,**
- արթնացնել հետաքրքրասիրություն,**
- հետաքրքրություն արթնացնել խնդիրների ինքնուրույն լուծման նկատմամբ,**
- աշակերտներին մղել ակտիվության,**
- իր վերաբերմունքն արտահայտել,**
- արմատավորել, ամրապնդել հմտությունները:**

Զարգացնողական նպատակները

Նպատում են՝ առանձնահատուկ և կրթական հմտությունների ձևավորմանը, մտային գործողությունների կատարելագործմանը, զգայական միջավայրի, սովորողների բանավոր խոսքի, երկխոսության հաղորդակցման մշակույթի զարգացմանը, ինքնավերահսկման և ինքնագնահատման իրականացմանը, իսկ ընդհանրական՝ անհատի կայացմանը և զարգացմանը: Այս նպատակի ձևակերպման համար պետք է կիրառել հետևյալ արտահայտությունները՝

- սովորել համեմատել,**
- սովորել գլխավորն առանձնացնել,**
- սովորել համարժեքները ստեղծել,**
- զարգացնել աչքաչափը,**
- զարգացնել մատների մանր շարժումները,**
- զարգացնել անձանոթ տեղանքում կողմնորոշվելու հմտությունները.**

Դիդակտիկ նպատակները

Նպատում են՝ առկա գիտելիքների, կարողությունների և հմտությունների բացահայտմանը՝ աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների վերլուծության ճանապարհով: Նպատակն անպայման պետք է հասանելի լինի ուսուցչի և աշակերտների գործողությունների արդյունքում:

Նպատակները պետք է բավարար լարվածություն ունենան, հասանելի լինեն, աշակերտների կողմից ընկալելի լինեն, առաջընթացային և ձկուն լինեն, այսինքն արձագանքեն պայմանների փոփոխությանը և նպատակին հասնելու հնարավորություններին: Սակայն նույնիսկ նպատակների ամենակատարյալ համակարգը նվազ արդյունավետություն կունենա, եթե ուսուցիչն այդ նպատակներին աշակերտների գործողությունների միջոցով հասնելու ճանապարհների վերաբերյալ ճշմարիտ պատկերացումներ չունենա:

Ուսուցիչը և աշակերտը հանդիսանում են նպատակի իրականացման սուբյեկտներ և այդ սուբյեկտների գործունեությունների համաձայնեցումը հանդիսանում է մանկավարժական հմտության չափանիշներից մեկը:

Արդի մանկավարժությունը պահանջում է նպատակների հստակ ձևակերպում և կատարման պարզություն: Դրա համար անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել գլխավորն առանձնացնելը, այսինքն ուսուցման նպատակներն ընտրելը:

Որպեսզի ուսուցչի նպատակները դառնան նաև աշակերտների նպատակները, անհրաժեշտ է օգտագործել նպատակադրման հնարներ: Վերջիններս դասակարգվում են՝



1. Տեսողական

- Թեմա-հարց
- Հասկացությունների հետ աշխատանք
- Վառ կետի իրավիճակ
- Բացառում
- Կռահում
- Խնդրահարույց իրավիճակ
- Խմբավորում

2. Լսողական

- Ամփոփիչ երկխոսություն
- Գտնել բառը
- Բացառում
- Նախորդ դասի խնդիր

Գործնականում նպատակադրման բոլոր հնարները հիմնված են երկխոսության վրա, դրա համար էլ շատ կարևոր է հարցերը գրագետ ձևակերպել, աշակերտներին սովորեցնել ոչ միայն այդ հարցերին պատասխանել, այլ նաև նոր հարցեր մտածել:

Նպատակն անհրաժեշտ է գրել գրատախտակին: Այնուհետև այն քննարկվում է, ընդ որում այդ ընթացքում կարող է պարզ դառնալ, որ այն միակը չէ: Քննարկումից հետո պետք է առաջադրել կատարման ենթակա գործողությունները՝ ընթերցել դասը, համառոտագրել, լսել զեկույցը, կազմել աղյուսակ, դուրս գրել անծանոթ բառերը և այլն:

Թվարկված գործողությունների կիրառման պարտադիր պայման են՝

- աշակերտների գիտելիքների և հմտությունների մակարդակի հաշվառումը
- մատչելիությունը, այսինքն դժվարության լուծելի մակարդակը
- հանդուրժողականությունը, բոլոր ճիշտ կամ սխալ, սակայն պարտադիր հիմնավորված մտքերը լսելու անհրաժեշտությունը
- ամբողջ աշխատանքը պետք է միտված լինի ակտիվ մտավոր գործունեության

Նպատակադրման մի քանի հնարների մեկնաբանություն

Թեմա-հարց

Դասի թեման ձևակերպվում է հարցի տեսքով: Առաջադրված հարցերին պատասխանելու նպատակով մասնակիցները պետք է գործողությունների պլան կազմեն: Աշակերտներն արտահայտում են բազմաթիվ կարծիքներ՝ ինչքան շատ են կարծիքները, այնքան զարգացած է միմյանց լսելու և մյուսների գաղափարներին աջակցելու կարողությունը, այնքան հետաքրքիր և արագ է ընթանում աշխատանքային գործընթացը: գործընթացը կարող է համակարգել ինչպես ուսուցիչը, այնպես էլ ընտրված աշակերտը, ընդ որում ուսուցիչն այս դեպքում կարող է միայն արտահայտել իր կարծիքը և ուղղորդել գործընթացը:

Օրինակ, «Համակարգչի հիմնական սարքավորումները» թեմայի համար կառուցել են գործողությունների պլան՝

1. Կրկնել համակարգչի հիմնական սարքավորումների վերաբերյալ գիտելիքները:
2. Սահմանել դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը:
3. Նկարագրել այդ սարքավորումների կառուցվածքը:
4. Նկարագրել այդ սարքավորումների աշխատանքի սկզբունքը:



Այսպիսով ձևակերպվում են կոնկրետ ուսումնառության նպատակներ:

Հասկացությունների հետ աշխատանք

Աշակերտներին, տեսողական ընկալման նպատակով, առաջարկվում է դասի թեմայի անվանումը և խնդրվում է բացատրել յուրաքանչյուր բառի անվանումը: Օրինակ դասի թեման է «Paint գրաֆիկական խմբագրիչի նկարչական գործիքները»: Այնուհետև թեմայի յուրաքանչյուր բառի նշանակությունից վեր է հանվում դասի նպատակը: Նույն կերպ կարելի է վարվել հարակից բառերի ընտրության միջոցով կամ բարդ բառի մեջ բառը կազմող հիմքերի փնտրման միջոցով: Օրինակ՝ դասի թեմաներն են «Էլեկտրոնային աղյուսակի ֆունկցիայի վարպետ» և «Էլեկտրոնային աղյուսակի տրամաբանական ֆունկցիաներ»:


Ամփոփիչ երկխոսություն

Ուսումնական արդիացման փուլում տարվում է մտածողության տրամաբանությանը, հստակեցմանը, ընդհանրացմանը միտված գրույց: Վերջինիս ընթացքը ուղղորդվում է այն հասկացություններին, որոնք աշակերտները չեն կարող պատմել չհիմնավորված գործողությունների և անհրազեկության պատճառով: Առաջանում է իրավիճակ, որի համար անհրաժեշտ են լրացուցիչ հետազոտություններ կամ գործողություններ: Ձևակերպվում է նպատակը:

Վառ կետի իրավիճակ

Դասին առընչվող բազմաթիվ միօրինակ առարկաներից, բառերից, թվերից, կերպարներից մեկն ընդգծված է գույնով կամ չափսերով: տեսողական ընկալման շնորհիվ ուշադրությունը սևեռվում է ընդգծվածին: համատեղ ուժերով որոշվում է ամբողջ առաջարկվածի առանձնացվածը և ընդհանրացվածը: Այնուհետև սահմանվում են դասի նպատակները:

Օրինակ, դասի թեման է՝ «Հիշող սարքեր» 6-րդ դասարան: Կարելի է կիրառել այսպիսի պաստառ՝



Խմբավորում

Բառերի, առարկաների, կերպարների, թվերի շարքից առաջարկվում է խմբավորել՝ հիմնավորելով գործընթացը: Խմբավորման չափանիշն արտաքին նշաններն են: Իսկ դասի խնդիրը կլինի «Ինչո՞ւ առանձնացված խումբն ունի այդպիսի նշաններ»:

Օրինակ 10 դասի թեման է «Paint գրաֆիկական խմբագրիչի նկարչական գործիքները»: Կարելի է



դիտարկել բառային խմբավորումը՝ **կաթոցիկ, ռետին, վրձին, մատիտ, խոշորացույց, հիմնական գույն, ետնապատկերի գույն, աշխատանքային տիրույթ, ներկայնակ, գործիքների վահանակ, մակագրման գործիք, տառատեսակի չափսի ընտրություն:**

Օրինակ 2. դասի թեման է «Excel էլեկտրոնային աղյուսակի ֆունկցիայի վարպետ ծրագիրը»: Խմբավորման համար ներկայացված բառերը կարող են այսպիսին լինել՝ **SUM, ADDRESS, YEAR, CHOOSE, MAX, SIN, PRODUCT, IF, SQRT, OR, COS, SYD, AVERAGE, INTRATE, TIME, OR, MEDIAN, AND, DATE, ROUND:**

Բացառում

Հնարքը կարելի է կիրառել հենվելով տեսողական կամ լսողական ընկալման վրա: Սկզբունքը նույնն է ինչ վառ կետի իրավիճակում, միայն թե այստեղ բոլոր ներկայացված նմուշները ոչ գույնով և ոչ էլ չափսերով չեն առանձնացվում: Այս դեպքում աշակերտները հիմնավորելով իրենց մեկնաբանությունները բացառման սկզբունքով գտնում են անհրաժեշտ պատասխանը:

Առաջին ձևը. դասի թեման է «Համակարգչի պերիֆերիկ սարքավորումները»: Անհրաժեշտ է վերլուծելով գտնել ավելորդը:



Երկրորդ ձևը. Աշակերտներին առաջադրվում է հանելուկների կամ ուղղակի բառերի շարք, որտեղ պատասխանները բազմակի անգամ կրկնվում են: Վերլուծելով, աշակերտներն արագ գտնում են ավելորդը:

Օրինակով՝ դասի թեման է «Անվտանգության ապահովումը համակարգչային սենյակում»:

- Անհրաժեշտ է բարձրաձայն ներկայացնել բառերի շարքը: Աշակերտներին առաջարկվում է ուշադիր լսել և մտապահել բառերի հետևյալ շարքը՝ արտահագուստ, չոր ձեռքեր, բարձր լարման էլեկտրական հոսանք, հեռավորությունը էկրանից, աթոռին նստելու ճիշտ դիրքը, ձեռքերի դիրքը, ոտքերի դիրքը, լուսավորվածությունը, էլեկտրամագնիսական դաշտը:
- Ի՞նչն է ընդհանուր բոլոր այս բառերի համար:
- Ո՞րն է ավելորդ այս շարքում: Բոլոր հիմնավորված պատասխաններից անպայման կլինի ճիշտ պատասխանը, որի միջոցով էլ կձևավորվի դասի նպատակը:



Խնդրահարույց իրավիճակ

Ստեղծվում է հայտնիի և անհայտի միջև հակասությունների իրավիճակ: Այս հնարքի կիրառման հաջորդականությունը հետևյալն է՝

- Ինքնուրույն լուծում
- Արդյունքների խմբային ստուգում
- Արդյունքների տարածայնության կամ կատարման դժվարությունների պատճառների բացահայտում
- Դասի նպատակների ներկայացում

Նախորդ դասի խնդիր

Դասի վերջում աշակերտներին տրվում է առաջադրանք, որի կատարման ընթացքում, գիտելիքների պակասի կամ ժամանակաի սղության հետ կապված, պետք է առաջանան դժվարություններ: Սա նշանակում է, որ աշխատանքը պետք է շարունակել հաջորդ դասին: Այսպիսով դասի թեման կարելի է ձևակերպել նախորդ դասին, իսկ հաջորդ դասին միայն վերականգնել հիշողության մեջ և հիմնավորել:

Դասի նպատակները ձևակերպելու համար կարելի է օգտագործել բազմաթիվ հնարքներ, որոնք տրված են պետական չափորոշիչի հիման վրա գրված մեթոդական գրականության մեջ՝ բերել օրինակներ, կազմել պլան, գրել ալգորիթմը, համեմատել, կարողանալ, իմանալ և այլն: Այսպիսի հնարքների իրականացման համար կարելի է կիրառել հետևյալ միջոցները՝ կախված նպատակից՝

«Հիշելու և վերարտադրելու համար»

Հանելուկ: Հայտնի է, որ ոչինչ այնքան չի գրավում ուշադրությունը և չի խթանում աշխատանքը, որքան զարմանալին: Մշտապես կարելի է գտնել այնպիսի տեսանկյուն, որի դեպքում նույնիսկ կենցաղային, առօրեականը վերածվում է զարմանալի: Դա կարող է լինել համակարգչի ստեղծման պատմությունից, գիտնականների կյանքից վերցրած մանրամասներ:

Հետաձգված գուշակում: Այս հնարքը կարելի է կիրառել բառերի ստուգաբանության, «Խոսող ազգանունների» ուսումնասիրմամբ պայմանավորված աշխատանքի ժամանակ: Դասերից մեկի ավարտին կարելի է այսպիսի հարց տալ՝ «Ի՞նչ է պետաբայթը և ինչի՞ է հավասար այն:» Իսկ հաջորդ դասը անհրաժեշտ է սկսել հենց այդ հարցի պարզաբանմամբ:

«Փոխըմբռնման և համադրության համար»

Արտառոց լրացում: Ուսուցիչը լրացնում է իրական իրավիճակը արտառոց պատմությամբ: Այսպիսի լրացումներն արդիական են և կարող են հետևյալ կերպ արտահայտվել՝ նամակ գրել ոլորտի որևէ հայտնի ներկայացուցչին, այդպիսի մի ներկայացուցչի անունից նամակ գրել մյուսին, իրավական փաստաթղթի կառուցվածքով գրել, օրինակ, Բիլ Գեյթսի կտակը, համակարգչի սարքավորումներից որևէ մեկի դատը կամ գանգատը մեկ այլ սարքավորման դեմ, և այլն:

«Փոխըմբռնման և կիրառման համար»

Գտնել սխալը: Այս հնարքը հնարավորություն է տալիս ուսուցչին ստուգել յուրացված թեմայի մանրամասները, իսկ աշակերտին՝ գիտակցել դասին ուշադիր լինելու կարևորությունը:

Տեսականի գործնականությունը: Ուսուցիչը տեսականի բացատրությունն իրականացնում է գործնական խնդրի միջոցով, որի լուծման արդյունավետությունն աշակերտներին ակնհայտ է: Օրինակ՝ հետևյալ իրավիճակը՝ ներկայացվում է «Կարմիր գլխարկը» հեքիաթի որևէ հատվածի գծապատկերային ալգորիթմը և տրվում է հարցը՝ «գայլը կուտի՞ Կարմիր գլխարկին»: Այսպես կարելի է սկսել «Ալգորիթմներ» թեմայի բացատրությունը: Նույն թեման կարելի է բացատրել նաև տնից դպրոց ճանապարհի վերլուծության միջոցով, դարձյալ կիրառելով ալգորիթմի գծապատկերային ներկայացումը:



Նպատակների ձևակերպման հնարքները ձրավորում են գործողության շարժառիթը, անհրաժեշտությունը: Աշակերտը գիտակցում է իր դերը գործողություններում և սեփական կյանքում: Նպատակադրման գործընթացը խմբային գործունեություն է, յուրաքանչյուր աշակերտը մասնակից է, ակտիվ գործիչ, զգում է իրեն որպես ընթանուր ստեղծագործության իրականացնող: Աշակերտները սովորում են իրենց մտքերն արտահայտել, իմանալով, որ իրեն կլսեն և կընկալեն: Սովորում են լսել մյուսներին, առանց որի փոխազդեցություն չի ստացվի:

Նպատակադրման նկատմամբ հատկապես այսպիսի մոտեցումն արդյունավետ է և ժամանակակից **Նպատակին** հնարավոր է հասնել բազմաթիվ խնդիրներ իրականացնելու ճանապարհով: Յուրաքանչյուր **խնդիր** առաջադրվում է ընդհանուր նպատակին հասնելու հաշվարկով: Այս գործընթացը կոչվում է ուսուցանման մարտավարություն:

Ձեռքի տակ ունենալով հստակ նյութ, ելնելով հստակ պայմաններից՝ դասարանի աշակերտների կազմը և քանակը, ուսումնական միջոցների առկայությունը, տարբեր տեսակի ծեռնարկներ և այլն, ուսուցիչն ընտրում է այնպիսի մեթոդներ և դրանց հետ աշխատելու հնարքներ, որոնք կնպաստեն նյութի յուրացմանը, այսինքն լուծվում է միավոր խնդիր: Հետևաբար **խնդիրը** հանդիսանում է ուսուցման ընդհանուր նպատակին հասնելու փուլ:

Այսպիսով դասի գործնական նպատակի ձևակերպման ժամանակ ուսուցիչը պետք է նշի այնպիսի կարողություններ և հմտություններ, որոնք պետք է ձևավորվեն կամ կատարելագործվեն դասի ընթացքում, այնուհետև նշված գործնական նպատակը հստակեցվում է գործնական խնդիրներով: Մեկ գործնական նպատակը կարելի է իրականացնել մի քանի դասի ընթացքում, իսկ գործնական խնդիրները լուծվում են կոնկրետ դասի ընթացքում:

Ճիշտ կառուցված դասապրոցեսում տարբերակում ենք դասի խնդրի 3 տիպեր՝

1-ին տիպի խնդիրներ: **Գիտելիքների ստացման խնդիրներ:** Միտված են որևէ գործողության կատարման հմտությունների ուսուցմանը: Օրինակ՝ գրագետ գրելը, քարտեզով կողմնորոշվելը, կողմնացույցից օգտվելը, Համացանցից օգտվելը, անհրաժեշտ տեղաեկատվության փնտրումը և այլն:

2-րդ տիպի խնդիրներ: **Հմտությունների ձեռքբերման խնդիրներ:** Այս խնդիրները պահանջում են տարբերել ուսումնասիրվող գործողության ճիշտ կատարումը սխալ կատարումից: Օրինակ՝ տարբերեն 1-ին տիպի խնդիրների ճիշտ կատարումը սխալից:

3-րդ տիպի խնդիրներ: **Դիրքորոշման ձևավորման խնդիրներ:** Այս խնդիրները պահանջում են ուսումնասիրվող գործողության ճիշտ կատարման առանձնահատկությունների սահմանման, մեկնաբանման և հիմնավորման կարողություններ:

Ուսուցման խնդիրը այնպիսի գիտելիքների և կարողությունների շարադրումն է, որոնցից աշակերտները կարող են օգտվել կամ դրանց վրա հիմնվել ուսումնառության տվյալ տեսական և գործնական փուլի ավարտից հետո: Ճիշտ ձևակերպվելու դեպքում խնդիրները հնարավորություն են տալիս փոխանցել հաղորդագրություններ՝ ուսուցչից աշակերտին, միևնույն և տարբեր ուսումնական հաստատությունների ուսուցիչների միջև: Հատկանշական է, որ խնդիրների ճիշտ ձևակերպմամբ աշակերտները ստանում են կոնկրետ պարտավորություններ՝ ուսուցիչը կազմակերպում է կրթական գործընթացը՝ դասախոսություններ, մեթոդական ցուցումներ, կոնսուլտացիաներ, իսկ աշակերտները, որոնք ի սկզբանե գիտեին, ինչի են ձգտում, խրախուսվում են մասնակցել ինքնուսուցմանը:

Խնդիրների ձևակերպումն ստիպում է տարբերակել առաջնահերթությունները և սահմանել կարևոր տեղեկատվությունն ու հմտությունները: Խնդիրներին անտեղյակ աշակերտներն ընկնում են անորոշության մեջ, ինչն էլ գործնականում նվազեցնում է յուրացվող գիտելիքների ծավալն ու խորությունը:



Եթե դասի խնդիրները վերջնակետ են, որտեղ ձգտում են հասնել ուսումնական գործընթացի մասնակիցները, ապա դասի պլանը այդ վերջնակետին հասնելու երթուղին է, իսկ գնահատումը հնարավորություն է տալիս որոշել հասել են վերջնակետին, թե՞ ոչ:

Լավ պլանավորումը ներառում է 3 բաղադրիչներ՝

1. Որո՞նք են ուսուցման նպատակները (գիտելիքներ, հմտություններ և կարողություններ):
2. Ինչպիսի՞ն է դասի կառուցվածքը:
3. Ինչպե՞ս պետք է գնահատել աշակերտների գիտելիքները և հմտությունները:


Աշակերտները պետք է իմանան, որ գնահատականը միշտ կախված է դասի խնդիրների կատարումից:

Յուրաքանչյուր դասի նպատակի և խնդիրների ձևակերպումից հետո, անհրաժեշտ է որոշել **դասավանդման մեթոդները և դասի կառուցվածքը:**




Գլուխ 6. Դասավանդման մեթոդներ


Գոյություն ունեն դասավանդման մեթոդների բազմաթիվ դասակարգումներ: Այն մեթոդները, որոնք հիմնված են ուսումնառության գործընթացում աշակերտների դերի վրա, բաժանվում են 3 խմբի՝



1. Պասիվ Այստեղ աշակերտները հանդիսանում են ուսումնառության «օբյեկտ», որը պետք է յուրացնի և վերարտադրի գիտելիքների աղբյուրի՝ ուսուցչի փոխանցած նյութը: Հիմնական մեթոդներն են դասախոսությունը, ընթերցանությունը և հարցումը:



2. Ակտիվ Այստեղ աշակերտները հանդիսանում են ուսումնառության «սուբյեկտ» և կատարում են ստեղծագործ առաջադրանքներ, ուսուցչի հետ երկխոսության մեջ են մտնում: Հիմնական մեթոդներն են ստեղծագործ առաջադրանքները, հարցերը ուղղված աշակերտից ուսուցչին և ուսուցչից՝ աշակերտին:



Փոխներգործում (անգլերենից թարգմանած inter - «միջև» act – «Գործողություն») թույլ են տալիս ուսումնական գործընթացի մասնակիցներին, ներառյալ ուսուցչին փոխազդել միմյանց վրա: Այս մեթոդները առավել համապատասխանում են անձի անհատականության բացահայտմանն ուղղված մոտեցումներին, քանի որ վերջիններս ենթադրում են համատեղ ուսուցում (խմբային, համագործակցային ուսուցում), ընդ որում և՛ աշակերտները, և՛ ուսուցիչը հանդիսանում են ուսումնական գործընթացի սուբյեկտներ: Ուսուցիչը հաճախ ներկայանում է կրթական գործընթացի կազմակերպիչի, ֆասիլիտատորի, խմբի ղեկավարի, աշակերտների նախաձեռնությունների համար անհրաժեշտ պայմանների ստեղծողի դերում:





Բացի դրանից, փոխներգործուն մեթոդի հիմքում ընկած է մասնակիցներից յուրաքանչյուրի փորձի միջոցով ուղղակի ազդեցությունը միմյանց վրա, քանի որ փոխներգործուն մեթոդներից շատերը իրականացվում են հենց մասնակցի փորձի շնորհիվ, ընդ որում ոչ միայն կրթական: Նոր գիտելիքը և կարողությունը ձևավորվում են հենց այսպիսի փորձի հիման վրա:

Ըստ գործունեության տեսակի մեթոդները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

- 1. Բացատրական-զննական**
- 2. Վերարտադրողական**
- 3. Խնդրահարույց ուսուցման**
- 4. Ուսուցողական-ճանաչողական գործունեության կազմակերպման**
- 5. Խթանման և մոտիվացիայի**
- 6. Վերահսկման և ինքնավերահսկման**
- 7. Ինքնուրույն ճանաչողական գործունեության**
- 8. Համակարգված ուսուցման**

Ըստ կառուցվածքի և կիրառման մեթոդները լինում են՝

1. Բանավոր

- **բացատրություն**- բանավոր փոխադրության կամ վերարտադրության ձև է, որտեղ բացահայվում են նոր հասկացություններ, տերմիններ, հաստատվում են պատճառահետևանքային կապերը և կախվածությունները, օրինաչափությունները, այսինքն բացատրվում է այս կամ այն երևույթի տրամաբանական բնույթը:
- **պատմվածք**- ուսումնական նյութի ներկայացման ձև է, որը բացառապես նկարագրողական բնույթ ունի (դիպաշար, զննական-ցուցադրական, տեղեկատվական):
- **տպագիր բառի հետ աշխատանք (գիրք)** – այս մեթոդը հնարավորություն է տալիս աշակերտին ուսուցչի անմիջական ղեկավարության տակ ինքնուրույն կազմակերպել ճանաչողական գործընթացը:
- **փոխադրություն** – սա ուսումնական գործընթացի մենախոսական ձև է, որի դիդակտիկ նշանակությունն այն է, որ այս մեթոդի շնորհիվ աշակերտներին է փոխանցվում, հաղորդվում, առաջարկվում մարդկության կուտակած ընդհանրացված գիտելիքները, ցուցադրվում են գործունեության օրինակները, իսկ աշակերտները պետք է հասկանան, հիշեն և վերարտադրեն յուրացված գիտելիքները:
- **պատմողական** – նյութի փոխադրության, ներկայացման ձև է, որտեղ կապակցված պատմվում է ժամանակի ընթացքում կատարված կոնկրետ փաստերի, իրադարձությունների, գործընթացների վերաբերյալ: Այն կարող է լինել սեղմագիր կամ դիպաշար ունեցող հետաքրքիր պատմվածք:
- **նկարագրություն** – նյութի ներկայացման ձև է, որտեղ հաջորդաբար թվարկում են շրջապատող իրականության երևույթների և առարկաների որակը, հատկությունները, առանձնահատկությունները, հատկանիշները:
- **խնդրահարույց փոխադրություն** – սա ուսուցչի կողմից առաջադրված խնդիրների և հարցերի լուծմանը միտված աշակերտների ինքնուրույն աշխատանքի (որպես կանոն՝ մտվոր) հետ



համադրվող փոխադրություն է:

- **գրույց** – հարց-պատասխան հիմնաքննարկումների, երկխոսությունների ժամանակ աշակերտների տեղեկատվություն ստանալու ձև է: Զրույցի տեսակներն են՝

катехизическая (աշակերտների պատասխանները ներառում են վերարտադրողական գործունեություն)

փորձարարական (ենթադրում է արդյունավետ, ստեղծագործ գործունեություն):

Փորձարարական գրույցի առանձնահատկությունն են՝

մասնակիցները գիտակցում են գրույցի նպատակը

բոլոր հարցերն այնպես են ընտրվում, որ աշակերտները հնարավորություն են ստանում ինքնուրույն եզրահանգումներ անել կամ գուշակել պատասխանը

գրույցի ընթացքում նախատեսվում են պարզ և բարդ հարցեր, վերջիններս ձևակերպվում են որպես խնդիրներ, իսկ դրանցում առանձնացվում են առավել մասնավոր հարցերը

խնդրի յուրաքանչյուր հարցի լուծմանը հետևում է ուսուցչի կողմից աշխատանքի արդյունքները ամփոփող եզրակացությունը:

2. **Դիտարկում** – զգայարանների միջոցով առարկաների և երևույթների ուղղակի, նպատակասլաց ընկալումն է ճիշտ պատկերացումների և հասկացությունների, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով:
3. **Փորձեր** – աշակերտների կողմից տարբեր սարքավորումների հետ աշխատելու կարողություններ, գործնական և հետազոտական կարողություններ պահանջող նոր նյութի ուսումնասիրմանը միտված ինքնուրույն աշխատանք է:
4. **Ուսուցման գործնական մեթոդներ** – աշակերտի գործունեության այնպիսի տեսակ է, որի ժամանակ գործնական աշխատանքների (գրավոր և բանավոր վարժություններ, գործնական և լաբորատոր աշխատանքներ, ինքնուրույն աշխատանքների որոշ տիպեր) կատարման ընթացքում տեղի է ունենում գործնական կարողությունների և հմտությունների ձևավորում և կատարելագործում:
5. **Վարժություններ** – որևէ գործողության պլանային կազմակերպված կրկնակատարում է, այդ գործողության կատարելագործման կամ յուրացման նպատակով:
6. **Քննադատական մտածողություն** - քննադատական մտածողությունը դասավանդման մեթոդ է: Այն հնարավոր է կիրառել բոլոր առարկաների դասավանդման ժամանակ: Քննադատական մտածողության զարգացումը կարող է սկսվել մանկապարտեզից՝ հասնելով մինչև բուհական լսարան:

«Քննադատական մտածողություն» տերմինը սահմանվել է Ամերիկյան փիլիսոփայության ասոցիացիայի կողմից որպես «նպատակաուղղված, ինքնակարգավորող դատողություն, որն ավարտվում է մեկնաբանությամբ, վերլուծությամբ, գնահատմամբ և ինտերակտիվությամբ, ինչպես նաև ակնհայտ, հայեցակարգային մեթոդաբանական կամ ենթատեքստային մտքերի բացատրմամբ, որոնց վրա հիմնված է այդ դատողությունը: աշակերտի իդեալական քննադատական մտածողությունը սովորաբար կապված է հետաքրքրասիրության, լավ տեղեկացվածության, վստահության պատճառի, ոչ կանխատրամադրվածության, ճկունության, գնահատման մեջ արդարամտության, սեփական կանխակալ կարծիքի հետ բախվելիս ազնվության, դատողությունների մեջ խելամտության հետ, ցանկության հետ վերանայելու, պարզելու խնդիրներն ու բարդ հարցերը, անհրաժեշտ տեղեկություն փնտրելիս հետևողականության, չափանիշներն ընտրելիս՝ խելամտության, այնպիսի արդյունքներ փնտրելու մշտականության հետ, որոնք նույնքան ճշգրիտ են, որքան սկզբնաղբյուրները: Սա մի համադրություն է, որ կապում է քննադատական մտածողության զարգացումը ռացիոնալ և



դեմոկրատական հասարակության հիմքերի ընթացման հետ: **Քննադատական մտածողությունը ցանկալի վերջնական արդյունքն ստանալու հավանականությունը մեծացնող ռազմավարությունը կամ ճանաչողական տեխնիկայի կիրառումն է:** Այս սահմանմամբ մտածողությունը բնութագրում է որպես վերահսկելիությամբ, հիմնավորվածությամբ, և նպատակասլացությամբ առանձնացվող երևույթ: Այն մտածողության այնպիսի տեսակ է, որին անդրադառնում են խնդիրների լուծման, եզրակացությունների ձևակերպման, հավանական գնահատման և որոշումների ընդունման ժամանակ: Ընդ որում մտածող մարդը կիրառում է այնպիսի հմտություններ, որոնք հիմնավորված և արդյունավետ են կոնկրետ իրավիճակում և լուծվող խնդրի տեսակի համար:

Քննադատական մտածողությունն օգտագործող աշակերտին բնորոշ են հետևյալ հատկությունները՝ **Պլանավորելու պատրաստակամությունը՝** մշտապես վարժվելով, յուրաքանչյուրը կարող է իր մեջ ձևավորել պլանավորելու սովորություն:

Ճկունություն

Հաստատակամություն

Սեփական սխալներն ուղղելու պատրաստակամություն

Գիտակցումը՝ այն ենթադրում է նպատակին հասնելու ճանապարհին սեփական գործողությունների դիտարկում: Քննադատաբար մտածող աշակերտները զարգացնում են սեփական մտածելու գործընթացի ինքնակառավարման սովորույթ:

Փոխգիջումային լուծումների որոնումը՝ արդի ժամանակաշրջանում գործունեության խմբային ձևերը գերակշռող են: Քննադատաբար մտածող աշակերտին անհրաժեշտ է տիրապետել ինչպես զարգացած հաղորդակցման հմտություններին, այնպես էլ մեծամասնությանը բավարարող որոշումներ գտնելու կարողություններին:

Մտավոր ունակությունների դասակարգման պատկերային արտացոլումներից մեկը կոչվում է «Բլումի բուրգ»: Այս մոդելը ստեղծվել է 20-րդ դարի 50-ական թվականներին՝ ամերիկացի հոգեբան Բենջամին Բլումի կողմից: Առ այսօր այն հանդիսանում է ուսումնական գործունեության ցանկացած ուղղության կրթական արդյունքի նկարագրման ամենապատկերավոր, ամենապարզ և հարմար եղանակը

Բլումը ոչ միայն նկարագրեց մտավոր կարողությունները, այլ դրանք բաժանեց ըստ բարդության աստիճանների: Բլումի համակարգում առանձնացված են 6 մակարդակներ՝

- գիտելիքներ/ վերարտադրություն
- ընթերցում
- կիրառություն
- վերլուծություն
- համադրում
- գնահատում



և նկարագրված են մասնակիցների տվյալ մակարդակին հասնելուն միտված հստակ

գործողությունները: Բուրգի հիմքում ընկած է գործունեության մոտեցումը, այսինքն մասնակիցների մտավոր կարողությունները հստակեցված են բայի միջոցով, որի օգնությամբ, մի կողմից, կարելի է աշակերտի առաջ շատ ճշգրիտ և հստակ դնել ուսումնական խնդիրը, մյուս կողմից ամրագրել և գնահատել ձեռք բերված արդյունքները: Բլումյան **«գործունեության բայերը»** բանալի-բառեր են, որոնք կարելի է անվերապահորեն կիրառել հարցադրումների և ուսումնական խնդիրների ձևակերպման համար՝ բուրգի ստորին բաժանման ամենապարզ առաջադրանքների համար՝ **անվանել, ցույց տալ, թվարկել** և այլն, մինչև բուրգի գագաթի ամենաբարդ առաջադրանքները՝ **հիմնավորել, ապացուցել, գնահատել**: Բուրգի գագաթը համապատասխանում է քննադատական մտածողության մակարդակին: Բլումի բնօրինակում **«գործունեության բայերը»** մոտ 300-ն են, սակայն դժվար թե որևէ ժամանակակից ուսուցիչ իր պահուստում առաջադրանքների այդքան բազմազան տեսականի ունենա: Շուրջ 60 տարվա գոյության ընթացքում Բլումի բուրգը ոչ միայն ժամանակավրեպ չի, այլ ընդհակառակը ձեռք է բերել հանրահայտություն ուսուցիչների մեծաքանակ համայնքի շրջանում: Բացի դրանից այն լրամշակվում և փոփոխության է ենթարկվում: Իսկ Web 3.0 երևույթի պարագայում Բլումի բուրգի նկատմամբ հետաքրքրությունը նոր ուժով ժայթքեց: Պարզվեց, որ հանրահայտ բուրգը կարող է ներառել ոչ միայն աշակերտների գործողությունների նկարագրությունները, այլ նաև այդ գործողությունների արդյունքը: Ընդ որում թվային դարաշրջանում արդյունքները բոլորովին այլ տեսք ունեն՝ մեդիա-սահիկահանդեսներ, տեսանյութեր, ձայնագրություններ, համակարգչի միջոցով արված տրամագրեր և դիագրամներ:

Արդի մանկավարժական մեթոդիկան առաջարկում է քննադատական մտածողության զարգացման վարժություններ կատարել: Այդ վարժությունների ընտրությունը ելնում է հետևյալ պահանջներից, համաձայն որոնց քննադատաբար մտածող Դասի ավարտին աշակերտը պետք է՝

1. Հոգա, որ իր հայացքները, որոշումները հստակ հիմնավորված լինեն, իսկ դրա համար



անհրաժեշտ է.

- ձգտել նոր վարկածների, այլընտրանքային բացատրությունների, աղբյուրների և եզրահանգումների որոնմանը:
- դիտարկել սեփական տեսակետից տարբերվող այլ տեսակետներ:
- ընդլայնել մտահորիզոնը, ձգտել բազմակողմանի տեղեկացվածության:

2. Ունակ լինի հստակ ներկայացնել ոչ միայն իր տեսակետը, այլ նաև ուրիշնորի տեսակետը, ավելի կոնկրետ՝

- հստակ և ճշգրիտ հասկանա ասվածի և գրվածի իմաստը, հաշվի առնելով իրավիճակի առանձնահատկությունները
- կենտրոնանալ ենթադրության կամ հարցի վրա, ձգտել հավատարիմ մնալ հիմնական թեմային
- գտնել և առաջարկել հիմնավորումներ
- ամբողջությամբ ուշադրություն դարձնել իրավիճակին
- գիտակցել սեփական համոզումները

3. Հարգել գրուցակցի կարծիքը և արժանապատվությունը, այսինքն՝

- կարողանալ լսել և լսել ուրիշներին
- զերծ մնալ քննադատական դիտողություններից, հաշվի առնելով գրուցակցի զգացմունքները,
- ընկալունակ լինել և ձգտել ուրիշի զգացմունքները, գիտելիքների մակարդակը և դատողությունների խորությունը հասկանալուն
- ուշադիր լինել գրուցակցի զգացողության նկատմամբ

Որպեսզի դասավանդումն առավել արդյունավետ լինի, հարկավոր է պատասխանել հետևյալ հարցերին՝

- Գիտելիքների ինչպիսի՞ նախնական պաշար ունեն աշակերտները:
- Որքա՞ն է աշակերտների ընդհանուր թվաքանակը դասարանում:
- Որքա՞ն է հատկացված ժամաքանակը:
- Ինչպե՞ս կառուցել դասը, որ այն ընդգրկի ամբողջ նյութը և աշակերտներին ստիպի ինքնուրույն մտածել:
- Ինչպիսի՞ մեթոդներ կիրառել դասի ընթացքում:
- Դասարանը բաժանե՞լ խմբերի թե ոչ:
- Ինչպիսի՞ դիդակտիկ նյութեր օգտագործել:
- Ի՞նչ առաջադրանքներ կատարել դասարանում:
- Ի՞նչ առաջադրանքներ հանձնարարել տանը կատարելու համար և այլն:

Դասի ամենօրյա պլանավորումը դասի արդյունավետության հետ կապված մտահաղացումների արդյունավետ իրագործման հրամայականն է: Դասի պլանավորման բաղադրիչներն են՝

- Դասի թեման:
- Դասի նպատակները (կրթական, զարգացնողական, դաստիարակ-չական):
- Դասի տեսակը (նոր նյութի յուրացման, ամրապնդման, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, յուրացված նյութի համակարգման և ընդհանրացման):
- Դասի հիմնական փուլերին հատկացվող ժամանակի բաշխում:
- Դասի ընթացքը:
- Դասի հենքային հասկացությունների ձևավորման փուլերը (հասկացությունների ներմուծում,



օրինակների ներկայացում, որոնցում կիրառված են այդ հասկացությունները, հասկացությունների էական և ոչ էական առանձնահատկությունների առանձնացում, էական առանձնահատկությունների վրա հիմնված հասկացությունների սահմանում):

- Դասավանդման մեթոդները՝ բանավոր (անհատական, համընդհանուր) կամ գրավոր (ինքնուրույն, ստուգողական աշխատանք, թելադրություն) հարցում, դասախոսություն, բացատրություն, խնդրահարույց բացատրություն, պատմվածք, զրույց, զրույցի տարրերով պատմվածք, տեղեկույթի աղբյուրների հետ ինքնուրույն աշխատանք, վարժություն, դերային խաղ, վարժությունների և խնդիրների կատարում սովորական կամ խաղային ձևով:
- Աշխատանքների ընդունումը՝ սխեմայի կազմում, աղյուսակների հետ աշխատանք, դասագրքի տեքստի հետ աշխատանք, նկարագրությունների կազմում:

Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ առանձին դասերի պլանավորված խնդիրները պետք է հանդիսանան ամբողջ ուսումնասիրվող նյութի ընդհանուր խնդրի բաղկացուցիչ մասը: Դասի ընթացքում բացահայտված գիտելիքների բաղադրիչները պետք է ապահովեն այս կամ այն ամբողջական խնդրի լուծման որոշակի մասը: Առանձին դասերի կոնկրետ խնդիրները պետք է դիտարկվեն մյուսների հետ փոխկապակցված:

Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ մտավոր գործունեության ակտիվությունը նյութի հետ ծանոթացմանը համաընթաց ավելանում է, եթե միաժամանակ աշակերտները կատարում են տվյալ նյութի յուրացմանը օժանդակող առաջադրանքներ, և պահպանվում են հետևյալ պայմանները՝

1) առաջադրված խնդիրը աշակերտներին մղում է որոշակի մտավոր հնարքի կիրառման

2) աշակերտներն ունեն տվյալ առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ, և տվյալ հնարքի կիրառման հմտություններ

3) տվյալ հնարքը համապատասխանում է նյութի բովանդակությանը, և ինչքան շատ է համապատասխանում, այնքան ակտիվացնում է գործունեությունը:

Աշակերտների մտավոր գործունեությունը կարելի է ակտիվացնել նաև դիդակտիկ կանոնի կիրառման շնորհիվ, համաձայն որի ուսուցիչն սկզբից ձևակերպում է հստակ առաջադրանք, որը աշակերտները պետք է կատարեն նյութի ուսումնասիրման ընթացքում, դրանից հետո առաջարկում է աշակերտներին կարդալ գիրքը, լսել ուսուցչի կամ հարցման համար գրատախտակի մոտ կանչված աշակերտին:

Դասի համար առաջադրանք ընտրելիս կարևոր է հաշվի առնել, որ բոլոր աշակերտները պետք է ի գործու լինեն դրանք կատարել, այլապես աշակերտները կկորցնեն ինքնավստահությունը և կնվազի ուշադրությունը: Բոլոր աշակերտները պետք է առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ունենան, հակառակ դեպքում ոչ բոլոր աշակերտները կմասնակցեն դասարնում կատարվող աշխատանքներին: Բոլոր աշակերտները պետք է համոզված լինեն, որ կկարողանան կատարել առաջադրանքը:

Եթե դասավանդման մեթոդները համարենք ուսուցչի և աշակերտների փոխկապակցված գործունեության համակարգված միջոցներ, որոնք ուղղված են դասի նպատակին հասնելուն, ապա յուրաքանչյուր մեթոդի նկարագրությունը պետք է ներառի՝

1) ուսուցչի ուսուցողական գործունեության նկարագրությունը

2) աշակերտի ուսումնական-ձանաչողական գործունեության նկարագրությունը

3) վերը նշվածների միջև կապը կամ միջոցները, որոնցով ուսուցչի ուսուցողական գործունեությունը ուղղորդում է աշակերտի ձանաչողական գործունեությանը

Այսպիսի մոտեցումը պետք է իր անդրադարձն ունենա աշակերտի անձը կարևորող դասի պլանավորման վրա:

Դասի պլանավորման համար կարելի է կիրառել դասի հետևյալ կառուցվածքային միավորները՝



- Դասի սկզբի կազմակերպում
- Գիտելիքների, կարողությունների և հմտությունների բացահայտում
- Աշխատանք ուսումնասիրվող նյութի հետ
 - Ծանոթացում նոր նյութի հետ
 - Գիտելիքների պլանավորված մակարդակի ապահովում (կրկնություն, կատարելագործում և գիտելիքների ու կարողությունների կիրառում):
- Գիտելիքների համակարգում և ընդհանրացում
- Տնային աշխատանքի կազմակերպում

Դասի պլանն անհրաժեշտ է կազմել այնպես, որ ուսուցման պլանավորվող արդյունքները շոշափելի ազդեցություն ունենան ուսուցման որակի բարձրացման վրա և առավել արդյունավետ իրացնեն ուսումնական ծրագրի հնարավորությունները: Դրա համար դասի պլանավորվող արդյունքները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝ լինեն հստակ, իրական և բաց, այսինքն աշակերտը պետք է հասկանա ի՞նչ են իրենից ուզում և ինչպե՞ս այն կատարել:

Դասի պլան կազմելիս խորհուրդ է տրվում առանձնացնել 3 գրաֆներ՝ «Դասի կառուցվածքային տարրերը», «Ուսուցչի գործունեությունը», «Աշակերտի գործունեությունը»:

Յուրաքանչյուր դասի պլանը պետք է հանգամանորեն մշակել, կցել այդ պլանին համապատասխան դիդակտիկ նյութ, սահմանել առաջադրանքների չափանիշները: Անհրաժեշտ է նշել ուսուցման ձևը և մեթոդները, ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերը, ստուգման ձևերը և միջոցները, ուսուցչի և աշակերտների գործողությունների հաջորդականությունը:

Ինչպե՞ս ճիշտ գրել դասի պլանը . . .

Դասի պլանի օրինակ

ԹԵՄԱ. թեմայի անվանումը պետք է համապատասխանի դասագրքին կամ ուսուցչի կողմից մշակված թեմատիկ բաշխմանը:

ԴԱՍ №/.. դասի հերթական համարը և նրա անվանումը դուրս է գրվում ուսուցչի թեմատիկ բաշխման ցանկից:

ԴԱՍԻ ՏԻՊԸ. սահմանում է ուսուցիչը՝ ելնելով դասի նպատակներից և խնդիրներից: Կարող են լինել՝ համակցված դաս, նոր նյութի ամրապնդամն դաս, կրկնման-ընդհանրացման դաս և այլն:

ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ. Հակիրճ թվարկել կրթական, դաստիարակչական և զարգացնողական խնդիրները:

Դասի խնդիրներին վերագրել հետևյալ բաղադրիչները՝

1. Կրթական.

- գիտելիքներ (հասկացություններ, երևույթներ, մեծություններ, բանաձևեր, օրենքներ, տեսություններ և այլն)
- կարողություններ.
 1. առանձնահատուկ(խնդիրներ լուծել, չափագրումներ անել և այլն)
 2. հանրակրթական (մենախոսական և երկխոսական գրավոր և բանավոր խոսք, ուսումնական և լրացուցիչ գրականության հետ տարաբնույթ աշխատանք, գլխավոր



նյութի առանձնացում պարզ և բարդ պլանի, նշումների, ալգորիթմի, թեզի, համառոտագրության, գծապատկերի, վերապատմելու, թեմատիկ պատասխանի, համեմատական բնութագրման, զեկույցի տեսքով և այս ամենը սահմանելու կարողություն)

- հմտությունը ինքննկության հասցված կարողությունն է:

2. Դաստիարակչական.

- բարոյական և էթետիկական պատկերացումներ, համակարգված աշխարհայացք, վարքի կանոններին հետևելու և օրենքների կատարման կարողություն,
- աշակերտի կարիքները, սոցիալական վարքի մոտիվացիան, արժեքները և արժեքային կողմնորոշումը, աշխարհայացքը:

3. Ջարգացնողական.

- Խոսքի, մտածողության զարգացում, աշակերտի զգայունակության (զգայարանների միջոցով արտաքին աշխարհի ընկալման) մակարդակի զարգացում, զգացմունքային-կամային (զգացմունքներ, կամային և ընկալման անհանգստություններ) և կարիք-մոտիվացիոն հատկանիշների զարգացում:
- Մտավոր աշխատանք. վերլուծություն, համադրում, դասակարգում, դիտողականություն, եզրահանգումներ անելու կարողություն, օբյեկտների հատկությունների կարևորում, գործունեության նպատակների և միջոցների առանձնացման կարողություն, արդյունքների ստուգում, փորձի պլան կազմելու ունակություն, վարկածների առաջ քաշում:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ գործնական (սրվակներ, չափանոթներ, քանոններ, կշեռքներ և այլ չափիչ սարքեր) և լաբորատոր աշխատանքների ու ցուցադրությունների համար անհրաժեշտ սարքավորումներն են: Այդ շարքում իրենց տեղն ունեն նաև կրթական տեխնիկական միջոցները՝ պրոյեկտոր, տեսա և ձայնա նվազարկիչներ, հեռուստացույց, համակարգիչ, տեսա և ֆոտոխցիկներ, էլեկտրոնային գրատախտակներ և այլն: Կարելի է այս ցուցակին ավելացնել նաև դիդակտիկ և ցուցադրման համար անհրաժեշտ նյութերը՝ քարտեր, թեստեր, պատասխաններ, կինոնկարներ, աղյուսակներ, սկավառակներ և այլն:

Գրատախտակը ևս համարվում է դասի համար անհրաժեշտ սարքավորում:

ԴԱՍԻ ՊԼԱՆԸ գրվում է հակիրճ՝ ըստ դասի հիմնական փուլերի: Հաճախ դասի պլան-համատոտագրության մեջ ներկայացվում է հետևյալ բովանդակությամբ աղյուսակի տեսքով՝

1. Կազմակերպչական մաս— 2-3 թույլ
2. Նոր գիտելիքների հաղորդում — 8-10 թույլ
3. Աշակերտների գործնական աշխատանք — 20-26 թույլ
4. Տնային առաջադրանքի հանձնարարում— 3-5 թույլ
5. Դասի ամփոփում — 1-2 թույլ

Կարելի է նշել նաև այն **տնային առաջադրանքը**, որն աշակերտները կստանան հաջորդ դասին:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ դասի պլանի հիմնական բաղկացուցիչ մասն է: Այստեղ ծավալուն ներկայացվում է դասի վարման գործողությունների հաջորդականությունը: Այս բաժինը կարելի է ներկայացնել աղյուսակի տեսքով:

Այս բաժնում ներկայացվում է դասի ընթացքը, որտեղ ուսուցիչը ձևակերպում է առանձին տերմինների և հասկացությունների ձևակերպումներ, ծավալուն ներկայացնում է ուսումնական նյութը և պատկերային միջոցների կիրառման հնարքները: Անհրաժեշտ է ուշադիր լինել պատկերներով կառուցվող մեթոդական հնարքների նկարագրման ժամանակ. այն ինչն ուսուցչին դուրին է թվում, աշակերտների համար հաճախ անհամեմատ դժվար է լինում: Այդ է պատճառը, որ պլանում անհրաժեշտ է որքան հնարավոր է մանրամասն նկարագրել դասարանի հետ աշխատանքի



մեթոդաբանությունը: Եթե ուսուցիչն ուզում է կիրառել հայտնի մարդկանց խոսքերը, ապա դասի պլանում այդ խոսքերը պետք է վերցնել չափերտների մեջ և նշել այն գիրքը, որից վերցվել են խոսքերը, նշել գրքի հրատարակման տարեթիվը և տեղը, հրատարակչությունը, էջը:

Արդյունավետության տեսանկյունից պետք է մշակել միանգամից մի քանի դասերի պլաններ, ձևակերպել յուրաքանչյուր դասի նպատակը և այդ դասի տեղը դասերի համակարգում: Սա հնարավորություն է տալիս փոխկապակցել տարբեր դասերը և նպաստում է ժամանակի ռացիոնալ տնօրինմանը: Էնչքան միևնույն թեմայի դասերը սերտորեն են կապված միմյանց հետ, այնքան դասն ինքն իրենով ավարտուն կլինի, այնքան աշակերտների գիտելիքներն ավելի խորը կլինեն:

Անհրաժեշտ է վերլուծելով նախորդ տարիների դասի պլանները, դրանք համադրել նորի հետ: Սա հնարավորություն կտա կատարելագործել դասի փուլերը:

ԱՆԹՈՒՅԱՏՐԵԼԻ՝ է նախորդ տարիների աշխատանքային պլանների՝ նորի հետ չհարմարեցված, կիրառումը:

Դասի պլան կազմելիս պետք է հասնել դասի նպատակի, ուսումնական նյութի բովանդակության, կրթական մեթոդների և աշակերտների ճանաչողական գործունեության կազմակերպման ձևերի համապատասխանությանը: Ինչքան բարձր է այդ համապատասխանությունը յուրաքանչյուր դասին, այնքան ազդեցիկ է դասի վերջնական արդյունքը:

Դասի նախապատրաստությունը նախապատրաստություն է աշակերտների մտածողությունը ղեկավարելու համար: Ուսուցչի համար շատ կարևոր է նախորոք հարցերը ձևակերպել այնպես, դրանք աշակերտների միտքն արթնացնեն:

Ուսուցչի աշխատանքի ինքնավերլուծությունը պետք է դառնա ուսուցչի աշխատանքի համակարգի անբաժանելի մասը:

Մշակված դասի պլաններին անհրաժեշտ է համապատասխանեցնել ցուցադրական և դիդակտիկ, նաև էլեկտրոնային նյութեր:



Դասի պլանների մի քանի ձևեր`

Դասի պլանի ձև 1

Ուսուցիչ` _____

Դասարանը` _____

Ամիս, ամսաթիվ` _____

Տևողությունը` _____

Առարկան` _____

Քայլ 1. Ընտրել թեման` _____

Քայլ 2. Հրահանգներ տալուց առաջ հստակեցնել նպատակները և միջոցները

Ակադեմիական նպատակները` _____

Հմտությունների զարգացման նպատակները` _____

Անհրաժեշտ պարագաները` _____

Սենյակի կահավորումը` _____

Խմբի չափը` _____

Խմբի կառուցվածքը` _____

Դերերը խմբում` _____

Քայլ 3. Բացատրել առաջադրանքը և համագործակցության նպատակը

1. Առաջադրանքը` _____

2. Հաջողության չափանիշներ` _____

3. Դրական փոխկախվածություն` _____

4. Անհատական հաշվետվություն` _____

5. Ներծնբային համագործակցություն` _____

6. Առանձնահատուկ վարքագծեր` _____

Քայլ 4. Վերահսկում և միջամտում

1. Ընթացակարգի վերահսկում` _____

2. Վերահսկում ուսուցչի կողմից` _____ Աշակերտի կողմից` _____

3. Միջամտություն առաջադրանքի կատարմանն աջակցելու համար` _____

4. Լրջամտություն թիմին աջակցելու համար` _____

5. Այլ` _____

Քայլ 5. Խմբային գործընթացի գնահատում և մշակումներ

1. Խմբի անդամների անհատական ուսումնառության գնահատում` _____

2. Խմբային արդյունավետության գնահատում` _____

3. Փոքր խմբային գործընթաց/մշակումներ` _____



4. Դասարանային մշակումներ՝ _____
5. Գծապատկերների գործածում՝ _____
6. Դրական հետադարձ կապ յուրաքանչյուր աշակերտին՝ _____
7. Բարելավման նպատակներ՝ _____
8. Հաջողության տոնումը՝ _____
9. Այլ՝ _____

Դասի պլանի ձև 2

Դասի թեման _____

Դասարանը _____

Ամիս/ամսաթիվ _____

Դասի նպատակը (ները)՝

- Կրթական _____
- Դաստիարակչական _____
- Զարգացողական _____

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ՝

1. Դասը համապատասխանում է արդյոք ծրագրին, դասի նպատակներին և խնդիրներին:
2. Դասի բովանդակության գիտական, տրամաբանական և հասանելի լինելու աստիճանը
3. Ո՞ր նյութի հետ են աշակերտներն առաջին անգամ աշխատում և ինչպիսի՞ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ կծնավորվեն և կամրապնդվեն դասի ժամանակ:
4. Ինչպե՞ս դասի նյութը կազդի աշակերտների ստեղծարարության և հմտությունների վրա:
5. Ի՞նչ միջառարկայական կապեր է իրականացնում դասը:
6. Նպաստե՞ց արդյոք դասը ուսումնառության նկատմամբ հետաքրքրության մեծացմանը:

Դասի տիպը և կառուցվածքը

1. Ինչպիսի՞ դասի տիպ է ընտրված
2. Դասի տեղը տվյալ թեմայի դասերի համակրգում
 - Ինչպիսի՞ կապ կար նախորդ դասերի հետ
 - Որո՞նք են դասի փուլերը, դրանց հաջորդականությունը և տրամաբանական կապը

Դասի մեթոդները

1. Որքանո՞վ դասի ընթացքում կիրառված մեթոդները կհամապատասխանեն դասի խնդիրներին:
2. Ո՞ր մեթոդները կնպաստեն աշակերտների ուսումնառության ակտիվացմանը:
3. Ինչպիսի՞ն կլինի կիրառված մեթոդների և դասավանդման հնարքների արդյունավետությունը:

Դասի ընթացքը

1. Դասի յուրաքանչյուր փուլում ուսումնական խնդիրների իրականացումը:
2. Դասի տարբեր ձևերի՝ անհատական, խմբային, և դասարանական համադրությունը:
3. Հերթագայվում էին արդյո՞ք ուսումնական տարաբնույթ գործընթացները (մեկ դասի ընթացքում սահանային քանակը 4-7 տեսակն է՝ յուրաքանչյուրի միջին տևողությունը 7-ից 10 րոպե):



Օրինակ՝ աշակերտների հարցում, նամակ, ընթերցում, ունկընդրում, տեսանելի ուսումնական նյութերի դիտում, հարցերի պատասխաններ և այլն:

- 4. Աշակերտների գործունեության վերահսկողության կազմակերպման ձևը:
- 5. Աշակերտների գիտելիքների և կարողությունների գնահատման ձևը:
- 6. Ինչպե՞ս իրականացվեց աշակերտների զարգացումը (տրամաբանական մտածողության զարգացումը, մտքերի քննադատականությունը, համեմատելու կարողությունը, եզրահանգումներ անելու կարողությունը):
- 7. Դասի և դասի առանձին փուլերի ամփոփման ձևերը:

Աշակերտների աշխատանքի ընթացքը

- Աշակերտների կազմակերպվածության և ակտիվության ապահովումը դասի տարբեր փուլերում:
- Աշխատանքի մեթոդների և հնարքների իրականացման աստիճանը:
- Ուսուցչի, առարկայի, դասի, տնային հանձնարարության նկատմամբ վերաբերմունքը:
- Հիմնական գիտելիքների և կարողությունների յուրացման աստիճանը:
- Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստեղծարար կիրառման հմտությունը:

Դասի ընդհանրական արդյունքները

- Դասի պլանի կատարումը:
- Դասի նպատակի իրականացման աստիճանը:
- Աշակերտների գործունեության ձևերի և գիտելիքների յուրացման աստիճանները՝
 - գիտելիքների յուրացում դաստիարակության, ըմբռնման և հիշման մակարդակում:
 - կիրառում նմանատիպ իրավիճակներում
 - Կիրառում նոր իրավիճակում, այսինքն՝ ստեղծարար
- Վարած դասից (կամ նրա առանձին փուլերից) բավարարվածությունը (անբավարարվածությունը)
- Վարած դասի օբյեկտիվ գնահատում
- Թերությունները վերացնելուն միտված առաջարկներ

Դասի պլանի ձև 3

Ուսուցչի անունը՝ _____

Դասարանը՝ _____

Ամիս,ամսաթիվ՝ _____

Տևողությունը՝ _____

Առարկան՝ _____

Դասի թեման՝ _____

Դասի նպատակները՝

1) Ակադեմիական _____

2) Սոցիալական _____

Կիրառվող մեթոդները



Դասի ընթացքը՝

Տնային աշխատանքի հանձնարարում:

Դասի պլանի ձև 4

Ուսուցչի անունը՝ _____

Դասարանը՝ _____

Ամիս, ամսաթիվ՝ _____

Առարկան՝ _____

Դասի տևողությունը՝ _____

Դասի նպատակը՝

Խնդիրները՝

- Կրթական
- Զարգացողական
- Դաստիարակչական

Դասի ավարտին աշակերտը պետք է՝

- Իմանա
- Կարողանա
- Տիրապետի
- Գիտակցի

Անհրաժեշտ սարքավորումներ

Ուսուցչի օժանդակ ռեսուրսներ

Դասի ընթացքը՝

- Դասի խթանում՝
- Հաշվառում՝
- Տնային հանձնարարության ստուգում՝
- Դասի թեմայի մեկնաբանություն՝
- Դասի իմաստի ընկալում՝
- Դասի կշռադատում՝

Գնահատում՝

Անդրադարձ՝



Դասի կառուցվածքայնացման ժամանակ կիրառվող տերմինների մեկնաբանությունները և սահմանումները

Իմացական գործընթացներ – ուսումնառության այն գործընթացները, որոնց օգնությամբ աշակերտն իմանում, ճանաչում են և շրջապատող աշխարհը, և սեփական մարմինն ու հոգեկան հատկությունները: Իմացական գործընթացներ են՝ զգայություններն ու ընկալումները, հիշողությունը, մտածողությունը, երևակայությունն ու կանխագագացումը:

Վարք – աշակերտի այն գործողությունները և դրանց համակարգերը, որոնք մատչելի են դիտման համար: Վարքն այն է, ինչ աշակերտն իրականում կատարում է իր շարժողական օրգանների օգնությամբ:

Մեթոդ – եղանակ, գործողությունների շարք, որի օգնությամբ յուրացնում են ուսումնական նյութը:

Դիտում – տեսողության և մյուս զգայարանների օգնությամբ աշակերտին հետաքրքրող երևույթների ընկալումն ու ընկալման արդյունքների գրանցումը:

Գիտափորձ(էքսպերիմենտ) – լաբորատորիայի կամ այլ հատուկ պայմաններում կատարվող հետազոտություն, որի ժամանակ հնարավոր է դառնում բացահայտել այս կամ այն երևույթի (անկախ փոփոխականների) և այդ երևույթի դրսևորման (կախյալ փոփոխականների) կապը:

Հարցաթերթ – գրավոր հարցերի մի շարք, որը ներկայացվում է աշակերտին՝ որոշակի գիտելիքներ (տեսակետներ, դիրքորոշումներ, մտադրություններ և այլն) բացահայտելու նպատակով:

Թեստ – խնդրի կամ խնդիրների մի խումբ, որը ներկայացնում են աշակերտին՝ նրա որոշակի գիտելիքների և հմտությունների զարգացման աստիճանը որոշելու նպատակով:

Պրոյեկցիա – աշակերտի ստացած և ունեցած գիտելիքների պրոյեկցիան որևէ արտաքին օբյեկտի՝ էկրանի, նկարի, նույնիսկ այլ մարդկանց կամ այլ գիտելիքի վրա: Այդ կերպ աշակերտի գիտելիքների պաշարը կարծես դուրս է բերվում նրանից և օբյեկտիվ գոյություն է ստանում:

Ուշադրություն – աշակերտի հոգեկան և մտավոր ակտիվության ուղղվածությունը դեպի որոշակի առարկաներ և երևույթներ:

Կամածին ուշադրություն – ուշադրության այն տեսակը, որն առաջ է գալիս և պահպանվում է գիտակցական ցանկությամբ և կամային ճիգերի օգնությամբ:

Ոչ կամածին ուշադրություն – ինքնաբերաբար, առանց մտադրության առաջ եկող ուշադրություն: Այն դիտվում է անսպասելի, ուժեղ և նոր գրգռիչների ազդեցության դեպքում:

Հետկամածին ուշադրություն – ուշադրության այն տեսակը, որը ծագում է կամածին ուշադրությունից հետո, երբ ուշադրության առարկայի կամ կատարվող աշխատանքի նկատմամբ հետաքրքրություն է առաջանում:

Ուշադրության կենտրոնացվածություն – գործունեության կենտրոնացումը մեկ կամ փոքրաթիվ օբյեկտների վրա, որի շնորհիվ դրանք ընկալվում են հստակորեն և ամենայն մանրամասնությամբ:

Ուշադրության ծավալ – կարճ ժամանակահատվածում (0,1) վայրկյան ուշադրության կենտրոնում



գտնվող և հստակորեն ընկալվող առարկաների քանակը:

Ուշադրության բաշխում – ուշադրությունը միաժամանակ մի քանի առարկաների կամ մեկից ավելի գործերի վրա կենտրոնացած պահելը:

Ուշադրության կայունություն – սա ուշադրության ժամանակային բնութագիրն է, կայուն է այն աշակերտի ուշադրությունը, ով երկար ժամանակահատվածում իր ուշադրությունը կարողանում է կենտրոնացած պահել որոշակի օբյեկտի կամ գործունեության վրա:

Ցրվածություն – ուշադրությունը քիչ թե շատ տևականորեն որևէ առարկայի վրա կենտրոնացնելու անկարողությունը: Կայունության հակադարձ հատկությունն է:

Դիտողականություն – երևույթների նկատմամբ ուշադիր լինելու և մանրամասնությունները նկատելու ընդունակությունը:

Զգայարան – զգայություններ առաջ բերող ֆիզիոլոգիական օրգան (տեսողական զգայարան, լսողական զգայարան և այլն):

Զգայություն – առարկաների առանձին հատկանիշի արտացոլումը աշակերտի ներաշխարհի վրա: Զգայությունների օրինակներ են գույնը, կոշտությունը, սառնությունը, հոտը, ցավը և այլն:

Զգայունակություն – շատ թույլ գրգռիչներն ընդունելու և դրանց ազդեցության տակ զգայություններ առաջ բերելու ընդունակությունը, որը հատուկ է աշակերտի զգայարաններին:

Ենթագիտակցական ընկալում – այնպիսի զգայություն կամ ընկալում, որը չի գիտակցվում, թեև ազդում է ներաշխարհի, իսկ երբեմն՝ նաև աշակերտի վարքի վրա:

Ադապտացիա – հարմարում, համակերպում:

Ընկալում – առարկաների ամբողջական պատկերների արտացոլումը աշակերտի գիտակցության մեջ:

Ըմբռնում – մտքով լրացված, իմաստավորված, հասկացված ընկալում:

Ընկալման ամբողջականություն – առարկայի ամբողջական պատկերի առաջացումը աշակերտի գիտակցության մեջ:

Ընկալման իմաստավորվածություն – ընկալման ընթացքում մտածողության և խոսքի օգտագործումը, որի շնորհիվ ընկալվող պատկերը նաև հասկացվում է՝ վերագրվելով որևէ դասի:

Ընկալման կոնստանտություն – ընկալման պայմանների փոփոխության դեպքում աշակերտի գիտակցությունում առարկայի պատկերի անփոփոխությունը:

Հիշողություն – ընկալվածը գիտակցությունում պահելու և վերարտադրելու ընդունակությունը, որը նաև բարդ գործընթացների մի խումբ է:

Մտապահում – հիշողության սկզբնական գործընթացը՝ ընկալվածը մտքում պահելու ընթացքը:



Վերարտադրություն – մտքում պահած գիտելիքներն ու տպավորությունները գիտակցության ու վարքի ոլորտը վերադարձնելու երևույթը:

Սորացում – հիշողության մեջ պահված տպավորություններն ու գիտելիքները վերարտադրելու անհնարինությունը:

Հիշողություն ակնթարթային (վայրկենական) – հիշողության այն մակարդակն է, որտեղ ընկալված տեղեկությունները մնում են 0,1-0,25 վայրկյանի ընթացքում:

Հիշողություն օպերատիվ (կարճատև) – հիշողության այն մակարդակը, որտեղ ընկալված ինֆորմացիան կարճ է մնում:

Հիշողություն տևական (երկարաժամկետ) – հիշողության այն մակարդակը կամ տեսակը, որտեղ ընկալված ինֆորմացիան մնում է շատ երկար, երբեմն ողջ կյանքի ընթացքում:

Կոնսոլիդացիա (ամրապնդում) կարճատև - հիշողությունից ինֆորմացիայի անցումն ու ամրապնդումը տևական հիշողության մեջ: Բարդ և հիմնականում ենթագիտակցական գործընթաց է:

Պատկերավոր հիշողություն – հիշողության այն տեսակը, երբ ինֆորմացիայի մտապահումն ու վերարտադրությունը կատարվում են մտապատկերների օգնությամբ: Պատկերավոր հիշողության ենթատեսակներն են՝ տեսողական, լսողական, հոտառական և այլն:

Խոսքային–տրամաբանական հիշողություն – խոսքի, տրամաբանական դատողությունների միջոցով արտահայտված ինֆորմացիայի մտապահումը և վերարտադրությունը:

Շարժողական հիշողություն – սեփական շարժումների մտապահումն ու վերարտադրությունը:

Հուզական հիշողություն – սեփական հույզերի և զգացմունքների մտապահումն ու վերարտադրությունը:

Զուգորդություն – երկու կամ ավելի երևույթների (մտապատկերների, սիմվոլների, նշանների) համադրումը՝ ասոցիացիա:

Զուգորդություն ըստ նմանության կամ տարբերության – առարկաների մտապատկերների միջև ստեղծվող կապ՝ ըստ նրանց մեջև նման կամ տարբեր (հակադիր) գծերի առկայության:

Զուգորդություն ըստ առընթերության – երկու կամ ավելի մտապատկերների, սիմվոլների կամ գործողությունների միջև այնպիսի կապ, որն առաջ է գալիս նրանց տարածական կամ ժամանակային առընթերության (այսինքն՝ իրար կողքի լինելու) հիման վրա:

Զուգորդություն իմաստային – մտապատկերների կամ նշանների այնպիսի կապ, որն առաջ է գալիս մեկ մտքի մեջ նրանց միավորման և այդ մտքի (իմաստի) հասկացման հիման վրա:

Մենմոնիկա – հուն. մենմե բառից, որ նշանակում է հիշողություն: Հիշելու, գիտելիքներ մտապահելու արվեստ, որն սկսել է զարգանալ դեռևս Հին աշխարհում:



Ոչ կամաժին մտապահում – գիտելիքների և տպավորությունների այնպիսի մտապահում, որը կատարվում է առանց գիտակցման նպատակադրման և կամային ջանքերի:

Կամաժին մտապահում – մտապահման այն տեսակը, երբ մարդ իր առաջ գիտակցորեն որևէ նյութ մտապահելու նպատակ է դնում և ջանքեր ու հնարներ է օգտագործում այդ նպատակին հասնելու համար:

«Ձեյգարնիկի էֆեկտ» - կիսատ թողած գործերն ու խնդիրները լավ հիշելու երևույթը՝ ի տարբերություն ավարտին հասցրած գործերի, որոնք մոռացվում են:

Հիպերմնեզիա - հիշողության, հատկապես վերարտադրության ուժեղացում:

Ռեմինիսցենցիա – հետաձգված վերարտադրության ավելի լրիվ ու հստակ լինելու երևույթ՝ համեմատած սովորելուց անմիջապես հետո կատարված վերարտադրության հետ:

Էյդետիզմ – այն երևույթը, երբ մտապատկերները նույնքան պայծառ ու մանրամասն են, որքան և ընկալման համապատասխան պատկերները: Երեխաներից շատերն օժտված են էյդետիզմով:

Ինքնագիտակցություն – իր մասին աշակերտի պատկերացումների և գնահատականների համակարգը: Անվանում են նաև «Ես» կամ ես–կոնցեպցիա:

Անձ – աշակերտի մտավոր և հոգեկան հատկությունների ամբողջությունը, որը համակարգ է կազմում:

Արտակարգ հիշողություն – միջինի համեմատ շատ ավելի արդյունավետ հիշողություն:

Բացարձակ հիշողություն – այնպիսի հիշողություն, որն ունեցող մարդը իր ընկալումներից ոչինչ չի մոռանում:

Դրդապատճառ – այն ներքին մղումը, ցանկությունը կամ նպատակի պատկերը, որն աշակերտին մղում է ակտիվության:

Ակտիվություն - աշակերտի գործունյա վիճակը: Տվյալ դեպքում՝ սովորած գիտելիքները կյանքում ծագած խնդիրների լուծման ընթացքում օգտագործելը, կրկնությունները և այլն:

Միտք – մտածական գործունեության արդյունքը, որը սովորաբար ներկայացված է լինում խոսքի միջոցով՝ դատողությունների և մտահանգումների ձևով:

Մտքի խորություն – երևույթների էական հատկություններն ու պատճառական կապերը մտքով բացահայտելու ընդունակությունը:

Մտքի ճկունություն – միևնույն խնդիրը լուծելու տարբեր հնարներ գտնելու ընդունակությունը:

Մտքի հետևողականությունը - սկսած մտավոր գործունեությունը, այդ թվում նաև խնդիրների լուծումը մինչև վերջ հասցնելու ընդունակությունը:

Մտածողություն – գիտակցական-իմացական գործընթաց, ամենից հաճախ՝ խնդրի լուծմանը գործընթաց, որի օգնությամբ մենք իմանում ենք երևույթների թաքուն կողմերն ու գոյության



օրինաչափությունները:

Մտածողություն առարկայական – մտածողության այն տեսակը, որն ընթանում է առարկաների հետ կոնկրետ գործողություններ կատարելիս:

Մտածողություն պատկերավոր – մտապատկերների վերլուծության և համադրության գործընթացները:

Մտածողություն կոմպլեքսային – մտածական բարդ գործընթաց, որի մեջ կան մտածողության բոլոր երեք հիմնական տեսակները:

Մտածողության վերլուծական տիպ – այնպիսի մտածական տիպ, որի մեջ գերակշռող գործողությունը մտքի առարկաների վերլուծությունն է:

Մտածողության համադրական տիպ – մտածողության այն անհատական տիպը, որի մեջ գերակշռող համադրական գործողությունն է:

Խնդիր – որոշակի նպատակ, որին պետք է հասնել որոշակի պայմաններում: Այդպիսի նպատակ կարող է լինել որևէ անհայտ մեծություն գտնելը, որևէ դրույթ ապացուցելը և այլն:

Վերլուծություն – մտածողության առարկայի պատկերը կամ նրան վերաբերող միտքը մասերի բաժանելը, տրոհելը:

Համադրություն – մտածողության առարկայի առանձին հատկությունների մասին պատկերացումներն ու միտքը մեկ ամբողջական պատկերի մեջ միավորելու գործընթացը:

Համեմատություն – վերլուծության և համադրության միջոցով երկու կամ ավելի թվով առարկաների նման կամ տարբերվող հատկությունների բացահայտումն ու գիտակցումը:

Վերացարկում – մտքով առարկաների առանձին հատկանիշների առանձնացումն ու մյուսները «մոռանալը»:

Ընդհանրացում – մի շարք առարկաների մեջ հայտնաբերված հատկության վերագրումը, տարածումը առարկաների (դասի) խմբի վրա:

Լեզու – սիմվոլների (նշանների) համակարգ և դրանք միմյանց կապելու կանոնները:

Խոսք – լեզվի օգտագործման ընթացքը: Խոսքը լինում է ներքին, արտաքին, բանավոր, գրավոր, ժեստային և այլն:

Հասկացություն – միտք, որն արտահայտված է առանձին բառով կամ բառակապակցության միջոցով:

Վերարտադրական մտածողություն – խնդիրների լուծում արդեն հայտնի եղանակներով՝ առանց միանգամայն նոր արդյունքների ստացման:

Ստեղծագործական մտածողություն – մտածողության այն տեսակը, որի օգնությամբ միանգամայն նոր



արդյունքներ են ստացվում:

Աշխարհի խնդրահարույց ընկալում – իրականության մեջ չլուծված խնդիրներն ու թաքուն օրինաչափությունները նկատելու ընդունակությունը, որը հատուկ է ստեղծագործական օժտվածություն ունեցող մարդկանց:

Ճշմարտություն – այնպիսի միտք, որը համապատասխանում է իրականությանը:

Երևակայություն – մտապատկերների հետ կատարվող մտային այնպիսի գործողություն կամ գործընթաց, որի շնորհիվ ստացվում են նոր մտապատկերներ կամ հայտնի մտապատկերների նոր զուգորդություններ:

Ֆանտազիա – իրականությունից առանձնապես հեռացած երևակայություն, ինչպես նաև նրա արդյունքները (ֆանտազիաներ):

Ընդգծում – գեղարվեստական ստեղծագործության հնար, երբ աշակերտի կամ երևույթի որևէ բնորոշ գիծ նկարում, վեպում կամ իրականության մեջ ներկայացվում են շատ հստակ, առաջին պլան մղված:

Չափազանցում – երևակայության աշխատանքի այն հնարը, որի դեպքում օբյեկտի, սուբյեկտի կամ երևույթի որևէ բնորոշ գիծ ցույց է տրվում սովորականից ավելի ուժեղ, մեծ և այլն:

Երազանք – ցանկալի ապագայի պատկեր, որը ստեղծվում է առավելապես երևակայության աշխատանքի շնորհիվ:

Անուրջ – երևակայական այնպիսի պատկերի ստեղծումը, որոնց իրականացումը գործնականում անհնարին է:

Մշակույթ – այն ամենը, ինչը երկրի վրա ստեղծվել է մարդկային գործունեության հետևանքով՝ գործիքներ, տներ, ճարտարապետական կոթողներ, գիտություն, գրականություն և այլն:

Երաժշտական երևակայություն – լսողական մտապատկերների օգնությամբ իրագործվող այն գործընթացները, որոնց շնորհիվ երաժշտական գործեր են ստեղծվում:

Խոսքային երևակայություն – երևակայության այն գործընթացները, որոնց «նյութը» բառերն են, խոսքը: Դրանց տակ միշտ կան թեկուզ չգիտակցվող տարբեր տեսակի մտապատկերներ:

Ինքնաքննադատություն – սեփական մտքերն ու գործողությունները սխալ համարելը, սեփական հնարավորությունները կասկածի տակ դնելը:

«Ուղեղային գրոհի» մեթոդ կամ բրեյնստորմինգ – մտածողության և երևակայության աշխատանքն ակտիվացնող մեթոդներից մեկը:

Ֆունկցիա - հայերեն՝ գործառնություն, այն դերը, որ տվյալ առարկան կարող է կատարել: Պարզ ասած՝ այն, ինչ կարելի է անել տվյալ առարկայի օգնությամբ: Օրինակ՝ գրիչը գրելու համար է, բանալին՝ կողպեքը բացելու և փակելու, բահը՝ փորելու և այլն:

Ընդունակություն – որևէ գործունեություն հաջողությամբ կատարելու աշակերտի ներքին



հնարավորությունը:

Բանականության (ինտելեկտի) թեստ – հատուկ խնդիրների խումբ, որը ներկայացվում է փորձարկվողին՝ նրա բանականության զարգացման մակարդակը որոշելու նպատակով:

Գիտակցություն – հոգեկանի տիրույթի վերին, բայց անկայուն ոլորտը, որը ծագում է արթնանալու հետ միասին, իսկ քնած ժամանակ անհետանում է:

Գիտակցում – հոգեկան գործընթաց (պրոցես), որի ընթացքում աշակերտի որոշ հոգեկան երևույթներ (ընկալումներ, հուշեր, մտքեր և այլն) դառնում են գիտակցված, այսինքն՝ անցնում են գիտակցության ոլորտ:

Ես – մարդկային անձնավորության միջուկը, կենտրոնը, որը յուրաքանչյուրի մեջ ընկալվում է անմիջականորեն:

Ես – կոնցեպցիա – պատկերացումների և գնահատականների համակարգ սեփական անձի ֆիզիկական և հոգեբանական գծերի մասին:

Ես - պատկեր – ժամանակի յուրաքանչյուր պահի գիտակցական վիճակի մեջ գտնվող աշակերտի ես-կոնցեպցիայի գիտակցված մասը: Մարդն իր ես-պատկերներն ընկալում է ներհայեցողաբար:

Ենթագիտակցություն – հոգեկանի այն ոլորտը, որը ձևավորվում է ծնվելուց հետո, անհատական հոգեկան զարգացման ընթացքում: Ես-կոնցեպցիան (ինքնագիտակցությունը) ևս յուրաքանչյուր պահի հիմնականում ենթագիտակցական է:

Հույզ (էմոցիա) – աշակերտի սուբյեկտիվ վերաբերմունքը երևույթների նկատմամբ, դրանց տրվող գնահատականի արտահայտությունը:

Զգացում – հուզական բարդ հոգեվիճակ, որի մեջ մտնում են՝ հույզ, իմացական բաղադրիչներ և կանխատեսում:

Զգացմունք – կայունացած հուզական վերաբերմունք (դիրքորոշում) որոշակի մարդկանց կամ այլ երևույթների նկատմամբ:

Ապրում - հույզերի և հուզամտածական զուգորդությունների հերթափոխումը ժամանակի ընթացքում:

Գերմոտիվացիա – աշակերտի գործունեության դրդապատճառների այնպիսի մեծ ուժ, որն արդեն կազմալուծում է այդ գործունեությունը: Այն առաջ է բերում գերուժեղ հուզական վիճակներ:

Բարձրագույն զգացմունքներ – այն զգացմունքները, որոնք առաջանում են աշակերտի գործունեության բարձրագույն տեսակների՝ գեղագիտական ընկալումների, բարոյական վարքի, մտավոր և ստեղծագործական աշխատանքի և արդյունավետ աշխատանքային գործունեության ընթացքում:

Գեղագիտական զգացմունքներ – աշակերտի այն զգացմունքները, որոնք առաջ են գալիս գեղեցիկն ու տգեղը, ներդաշնակն ու աններդաշնակը ընկալելիս:

Բարոյական զգացմունքներ – զգացմունքներ, որ մենք ունենում ենք մեր և ուրիշների վարքին բարոյական գնահատականներ տալիս:



Իմացական զգացմունքներ – այն զգացմունքները, որ մենք ունենում ենք երևույթներն ըմբռնելու, հասկանալու, կանխատեսելու և ստեղծագործելու ընթացքում:

Գործնական (պրակտիկ) զգացմունքներ – գործնական աշխատանք կատարելիս, նյութական և հոգևոր արժեքներ ստեղծելիս աշակերտի ունեցած զգացմունքները:

Սեր – զգացում, որի մեջ հիմնականն այն է, որ նրա օբյեկտը մեծ, երբեմն անփոխարինելի արժեք է համարվում:

Խառնվածք – հոգեկան բնածին գծերի մի ամբողջություն, որը բնորոշում է աշակերտի հոգեկան գործունեությունն իր շարժունության, դինամիկ տեսակետից:

Խառնվածքի բաղադրիչներ – խառնվածքի հոգեբանական համակարգը կազմող հատկություններ՝ զգայնություն, ռեակտիվություն, ակտիվություն, ինտրովերսիա և այլն:

Խառնվածքի տիպեր – խառնվածքի մեջ մտնող հոգեկան գծերի տարբեր զուգորդություններ: Հիմնական տիպերն են՝ սանգվինիկ, խուլերիկ, ֆլեգմատիկ և մելանխոլիկ:

Բնավորություն – հոգեկան գծերի և միտումների համակարգ, որն առաջ է եկել աշակերտի անհատական զարգացման ընթացքում և որոշակի ոճ է հաղորդում նրա վարքին:

Բնավորության գիծ – բնավորության որևէ առանձին հատկություն, օրինակ՝ չարություն, բարություն, ծուլություն, հայրենասիրություն և այլն:

Բնավորության մակերեսային գիծ – բնավորության այնպիսի գիծ, որն անմիջականորեն դրսևորվում է աշակերտի վարքում և արտահայտիչ շարժումներում:

Բնավորության խորքային գիծ – բնավորության այնպիսի գիծ, որը թաքուն է մնում, այսինքն՝ աշակերտի վարքում և արտահայտիչ շարժումներում չի դրսևորվում:

Վերագրում – ուրիշի վարքը դիտելով՝ նրան բնավորության գծեր, դրդապատճառներ և այլ հոգեբանական հատկություններ վերագրելը: Ատրիբուցիա:

Վերագրում – ուրիշի վարքը բացատրելիս նրա մեջ այնպիսի հատկություններ, զգացմունքներ և դրդապատճառներ տեսնելը, որոնք իրականում չկան:

Կամք – բնավորության բարդույթ, որը թույլ է տալիս վճիռներ կայացնել, իրագործել դրանք և հաղթահարել ծագող դժվարությունները:

Բնավորության կամային գծեր – բնավորության այն գծերը, որոնք մտնում են կամքի հոգեբանական բարդույթի մեջ: Դրանցից են՝ վճռականությունը, համառությունը, տոկունությունը և այլն:

Համարձակություն – հնարավոր անհաջողությունից չվախենալն ու վտանգին դեմ-դիմաց գնալը:

Սոցիալական խումբ – մարդկանց խումբ, որը կազմված է երկու կամ ավելի անդամներից:



Առաջնորդ (լիդեր) ոչ պաշտոնական – խմբի կազմում ինքնաբերաբար առաջ մղված առաջնորդ:

Առաջնորդ (լիդեր) պաշտոնական – ուսուցչի կողմից տվյալ խմբում պաշտոնապես նշանակված առաջնորդ:

Սոցիալական նորմ – կանոն, որը ստեղծվել է աշակերտների վարքն ու հարաբերությունները կարգավորելու համար:

Զիջողականություն – նորմերի մի մասն ընդունելը և ըստ դրանց պահանջների գործելը:

Ավտորիտարիզմ – առաջնորդի աշխատանքի այն ոճը, որի դեպքում նա շատ խիստ է իր ենթակաների հետ, բայց հեշտ ենթարկվող՝ վերադասի հետ ունեցած հարաբերություններում, սիրում է պատժել, անհանդուրժող է:

Դեմոկրատիզմ – կառավարման ոճ, որին հատուկ է մարդասիրությունը, մյուսների իրավունքների նկատմամբ հարգանքը, մտքի ձկունությունը և այլ դրական հատկություններ:

Հանդուրժողականություն՝ սոցիալ-հոգեբանական – հանդուրժողականություն մյուս աշակերտների անձի և հայացքների նկատմամբ:

Անհանդուրժողականություն – մյուս աշակերտների տեսակետների, խառնվածքի ու բնավորության գծերի նկատմամբ բացասական, անհանդուրժող վերաբերմունքը: Հաճախ զուգորդվում է բռնությամբ:

Սոցիալական ընկալում – այլ մարդկանց, խմբերի և ընդհանրապես սոցիալական երևույթների ընկալումը:

Ստերեոտիպ – Բառն առաջացել է «կարծր, պինդ» և «տիպ» բառերից: Պարզեցված և կարծրացած պատկերացում և գնահատական մարդկանց, խմբերի և ազգերի մասին:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1. Դասն ամբողջական համակարգ է.....	2
Դասի տիպերը.....	2
Դասի ոչ ավանդական ձևերն են`.....	2
Դասի կառուցվածքը.....	3
Նոր նյութի յուրացման դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը`.....	3
Գլուխ 2. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դասի հնարավոր կառուցվածքները.....	5
Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդման և զարգացման դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը`.....	5
Կարողությունների և հմտությունների ձևավորման դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը`.....	5
Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը`.....	5
Գլուխ 3. Գիտելիքների ընդհանրացման և համակարգման դասի կառուցվածքները`.....	6
Կրկնողության դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը`...6	6
Կրկնողական-ընդհանրացնող դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը`.....	6
Ստուգողական կամ սխալների ուղղման դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը`.....	6
Համակցված դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը` (այս դասը ունենում է մեկ կամ մի քանի դիդակտիկ նպատակներ).....	7
Գլուխ 4. Դասի կառուցվածքային փուլերը.....	8
1. Կազմակերպչական.....	8
2. Տնային առաջադրանքի բազմակողմանի ստուգում.....	8
3. Գիտելիքների կարողությունների և հմտությունների բազմակողմանի ստուգում.....	9
4. Նոր նյութի ակտիվ և ըմբռնումով յուրացնելուն միտված նախապատրաստություն10	10
5. Նոր գիտելիքների յուրացում.....	10
6. Նոր նյութի ըմբռնման ստուգում: Նոր գիտելիքների յուրացում.....	11
7. Նոր նյութի ամրապնդում.....	11
8. Տնային առաջադրանքի հանձնարարում, իրականացման մեկնաբանում.....	12
9. Դասի ամփոփում.....	12
10. Դասի նկատմամբ պահանջները.....	13
Դասի նպատակը.....	15
Ուսուցողական նպատակներ.....	16
Դաստիարակչական նպատակները.....	16
Զարգացնողական նպատակները.....	17
Դիդակտիկ նպատակները.....	17
Նպատակադրման մի քանի հնարների մեկնաբանություն.....	18
Թեմա-հարց.....	18
Հասկացությունների հետ աշխատանք.....	19
Ամփոփիչ երկխոսություն.....	19



Վառ կետի իրավիճակ.....	19
Խնթավորում.....	19
Բացառում.....	20
Խնդրահարույց իրավիճակ.....	21
Նախորդ դասի խնդիր.....	21
«Հիշելու և վերարտադրելու համար».....	21
«Փոխըմբռնման և համադրության համար».....	21
«Փոխըմբռնման և կիրառման համար».....	21
Գլուխ 6. Դասավանդման մեթոդներ.....	24
Ինչպե՞ս ճիշտ գրել դասի պլանը.....	31
Դասի պլանների մի քանի ձևեր`.....	33
Դասի պլանի ձև 1.....	33
Դասի պլանի ձև 2.....	34
Դասի պլանի ձև 3.....	35
Դասի պլանի ձև 4.....	36
Դասի կառուցվածքայնացման ժամանակ կիրառվող տերմինների մեկնաբանությունները և սահմանումները.....	37